

923

ԿՕՆՖԻԿԱՆ

ԿՕՆՖԻԿԱՆ
Բ-24

ԹԻՖԼԻՍ
1897

Հովտոհ 8

Բ-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱԴԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 189

ԿՆՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՕՆՖՈՒՑԻՈՍ

ԿԱԶՄԵՑ Գ. ԲԱԳԸ.

Դիմիտ 20 կուպ.

280
186-ԲԱ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի
ИПОГРАФИЯ М. Д. РОТИНЯНЦА.
1897

1 [ԿՈՆՏՈՒՅ] Կ.
Բ-24
280
1086-ԲԱ
Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն
№ 139

ԿՕՆՑՈՒՑԻՈՍ

ԵՒ ԻՒՐ ՓԻՒՍՈՓԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

1005
20539

Կազմեց Գ. ԲԱՂԲ.

(10)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի
Типография М. Д. Ротинянца, Гол., № 41.
1897

9292-142

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Апрель
1897 года.

Այս կենսագրութիւնը կազմելիս իբրև ուղե-
ցուց օգտուեցի ենթ. 1) Պաւլինկովի հրատարակած
„Конфуцій, его жизнь и философская дѣятель-
ность. Біографическій очеркъ К. М. Карякина“. 2)
„Религіи востока. Конфуціанство, Буддизмъ
и Лаосизмъ“ В. Васильева. 3) „Современный
Китай“ Ж. Симона և արի.

Գ. Բաղր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
Կազմողի կողմից.	Գ.
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ, Չինաստանի համառօտ պատ- մական տեսութիւնը մինչև Կօնֆուցիոս.	1
ԳԼՈՒԽ Ա. Կօնֆուցիոսի տոհմագրութիւնը: — Նրա ծնունդը, մանկութիւնը և պատա- նեկութիւնը:—Պաշտօն ստանձնելը: — Պաշտօնավարութեան մէջ ունեցած չա- ջողութիւնը	18
ԳԼՈՒԽ Բ. Մօր մահը: — Պաշտօնաթող լի- նելը:—Կօնֆուցիոս առաջին անգամ աս- պարէզ է դալիս իբրև հասարակական ու- սուցիչ: — Յռամեայ սուգ: — Գիտութիւնով և արուեստներով պարապելը: — Կօնֆու- ցիոս հռչակում է:—Նրա առաջին ճա- նապարհորդութիւնը և տեսական գիտու- թիւնների դործադրութիւնը: — Երաժշ- տութիւնով պարապելը.	28
ԳԼՈՒԽ Գ. Վերադարձը և գիտնական պարապ- մունքների շարունակութիւնը:—Տաի իչ-	

խանութեան մէջ ճանապարհորդելը: —
Հանդիպումն: — Ձէռն իշխանութիւնը գը-
նալը: — Չինաց ամենահին խմաստունների
ստացուածքները և Կօնֆուցիոսի կար-
ծիքը նրանց մասին: — Կօնֆուցիոսի տե-
սակցութիւնը Լաօ-ձի'ի հետ 37

ԳԼՈՒԽ Գ. Տսի և լետոյ Լու վերադառնալը: —
Աշակերտների հետ ունեցած խօսակցու-
թիւնը: — Սուրբ գրքերի ուղղելը: — Կօն-
ֆուցիոս սկսում է իւր պատմական
«Չուն-ցիւ» գրուածքը և այլ աշխատու-
թիւնները 54

ԳԼՈՒԽ Ե. Կօնֆուցիոս գարձեալ ճանապար-
հորդում է: — Կօնֆուցիոսի հաջեացքը որ-
սորդութեան մասին: — Կօնֆուցիոսի կո-
րովամտութիւնն ու մեծահոգութիւնը: —
Աշակերտների հետ ունեցած խօսակցու-
թիւնը հայրենիքը թշուառութիւնից ա-
զատելու մասին. 62

ԳԼՈՒԽ Զ. Կօնֆուցիոս որպէս քաղաքական
գործիչ: — Նրա ձեռք առած միջոցները
ժողովրդի կրթութիւնը բարելաւելու հա-
մար: — Կօնֆուցիոս նշանակում է բար-
ձրագոյն դատաւոր: — Թշնամիների որո-
ղայթները և Կօնֆուցիոսի պաշտօնաթող
լինելը: — Անջաջողութիւնները սաստիկ
վշտացնում են Կօնֆուցիոսին 74

ԳԼՈՒԽ Է. Հայրենիք վերադառնալը: — Կօնֆու-
ցիոսի վերջին տարիները: — Մահը և թա-
ղումը: — Մահուանից լետոյ Կօնֆուցիո-
սին ցոյց տրուած յարգանքները. 88

ԳԼՈՒԽ Ը. Կօնֆուցիոսի վարդապետութեան
յաջողութիւնը և նրա պատճառները: —
Կօնֆուցիոսի և նրա վարդապետութեան
բնորոշ լատիանիշը 97



ՆԵՐՍԺՈՒԹԻՒՆ

Չինաստանի համառօտ պատմական տեսութիւնը մինչև
Կօնֆուցիոս:

Չինաստանի մեծ փիլիսոփայի կենսագրութիւնը պատմելուց առաջ անհրաժեշտ է անել այս երկրի համառօտ պատմական տեսութիւնը մինչև Կօնֆուցիոս, որպէսզի ընթերցողը ծանօթանայ այն ժամանակամիջոցի հետ, որի մէջ ապրում էր մեծ փիլիսոփան, և փոքր ինչ զաղափար կազմէ Կօնֆուցիոսից առաջ ապրող այն իմաստունների մասին, որոնցից նա առել է իւր վարդապետութեան հիմունքները:

Ընդհանուր պատմութեան մէջ չինաց ազգը ներկայացնում է մի տարօրինակ երևոյթ. այս ազգըն ամենահինն է աշխարհիս վրայ ապրող բոլոր ազգերից: Շատ ազգեր կամ բոլորովին անհետացել են՝ թողնելով միայն չիչատակարաններ, որոնք վկայում են նրանց անցեալ փառքը, կամ այն աստիճան փոխուել են, որ բոլորովին կորցրել են իրանց նախկին տիպը: Այն-ինչ չինացիները մնացել են ճիշտ այնպէս՝ ինչպէս որ եղել են հազարաւոր տարիներ առաջ: Ամենահին ժամանակնե-

րից նրանք լալտնի են իբրեւ կրթուած և կուլտուրական ժողովուրդ. բայց հասնելով քաղաքակրթութեան որոշ աստիճանի՝ նրանք կանգ են առել. ուստի և այդ քաղաքակրթութիւնը մինչեւ այժմ անփոփոխ պահպանուել է այնպէս՝ ինչպէս որ եղել է 3000 տարի առաջ: Արդէն ամենահին ժամանակներն էլ նրանք համարուում էին նոյնպիսի լաւ երկրագործներ, ինչպէս որ այժմ են: Երկրագործութիւնը նրանց մէջ շատ առաջ էր գնացել. նորանց ծանօթ էին ալ և ալ հողերի զանազան լատկութիւնները, նրանց ուղղելու ու պարտացնելու կերպը: Նրանք մեծ լաջողութեամբ տնկում էին թթենիներ և ձեռք բերում մետաքս, գործում էին բամբակէ և բրդէ գործուածքներ և շինում զանազան տնային ու պատերազմական գործիքներ. կտրում էին դրամներ. ձեռք բերում ալ և ալ ներկեր. փղոսկրից և եղջիւրներից շինում էին զանազան առարկաներ. մի խօսքով մեքենայական աշխատանքի մէջ չինացիները ամենահին ժամանակները ունէին նոյն կատարելութիւնը՝ ինչ որ այժմ ունին:

Չինացիներին անլալտ չէր նաեւ գեղարուեստը. բայց սրա մէջ, բացի մի քանի սկզբնական քալերից՝ նրանք առաջ չգնացին—գեղեցկութեան իդէալը շատ հեռու էր նրանց սառն ու խոհական բնաւորութիւնից: Նորանց ծանօթ էին նոյնպէս չեղարչութիւնն ու քանդակագործութիւնը, որոնցից

առաջինը մինչեւ այժմ էլ լալտնի է գոյների չափազանց պայծառութեամբ և աններդաշնակութեամբ, իսկ երկրորդը չինացիներին լատուկ օտարոտի և մանրակրկիտ բնաւորութեամբ: Ճարտարապետական արդիւնքներն ևս ցոյց չտուին մի առանձին լառաջադիմութիւն, թէև լալտնի էին իրանց տարօրինակ առանձնալատկութեամբ, ինչպէս ընդհանրապէս ամեն բան չինացիների մէջ: Շինութիւնները մեծաւ մասամբ կառուցուում էին բամբուկից քարէ հիմքով. նրանց տաճարներն ընդհանրապէս ներկայացնում էին փոքրիկ մատուռներ, կամ սիւներով շրջապատուած մեծ բակեր, որոնց ծալրում սովորաբար զետեղւում էր զոհարանը:

Շատ հին ժամանակներում նրանք մշակեցին կրօնական հայեացքներ, որոնք լալտնի էին իրանց անորոշ, մութ և չփոթ բնաւորութեամբ: Այս հայեացքների էութիւնը հետեւեալն է. նրանք երկրպագում էին երկնքին և երկրին, որպէս բոլոր արարածների հօրը և մօրը: Երկինքը նրանց համար հրամայող հայր էր, իսկ երկիրը—մայր. դրա համար էլ երկինքը համարուում էր արական տարր, Եան, որ ներկայացնում էր կեանքի և գոյութեան ներգործող և կատարեալ վարիչը, իսկ երկիրը՝ իգական, Ին, որ ներկայացնում էր մեռեալ, անշարժ և անգործունեալ տարր: Բոլոր կատարեալ երևոյթները չինացիները ընդունում էին իբրեւ Եան, իսկ անկա-

տարները—իբրեւ Ին. բայց և այնպէս Յանը նրանց համոզմամբ անդադար միանում էր Ին-ի հետ, ինչպէս հայր և մայրը՝ ծննդաբերութեան համար։ Չինացիները պաշտում էին նաև հոգիներ ու զներ, իբրեւ զանազան ոյժերի և բնութեան երևոյթների ներկայացուցիչներ։ Նրանք երկրպագում էին նաև իւրեանց նախնեաց հոգիներին, որոնք համարւում էին ապրողների պաշտպաններ։ Նրանց կարծիքով մեռեալների հոգիները կարող էին տալ իմաստուն խորհուրդներ, կամ պատժել ու հետամուտ լինել որեւէ մէկին վրէժխնդրութեամբ վառուած։ Ի պատիւ երկնքի, երկրի, նոյնպէս նախնեաց և հոգիների՝ սահմանուեցին զանազան սոնախմբութիւններ և կատարւում էին զանազան զոհաբերութիւններ։ Զոհաբերութեան ժամանակ ածում էր երաժշտութիւնը և երգւում էին զանազան ոտանաւորներ։

Վերջին հանգամանքը ցոյց է տալիս, որ չինացիները այդ ժամանակները գրականութիւն ևս ունէին։ Յիբաւի գիրը Չինաստանում հնարուած է շատ հին ժամանակուանից. սկզբում նկարում էին չիշուող առարկաների պատկերները, իսկ վերջերը հնարուեցան նշանագրեր, որոնք բաղկացած էին երեք գծերից, մէկը երկայն, երկուսը կարճ։ Այս նշանագրերով գրուեցան չինաց հին գրքերը։ Չինաստանում գիտութիւնն ևս Աօնփուցիոսից ղեռ շատ առաջ բաւական կատարելութեան էր հասած։

Աողմնացոյցի գործածութիւնը նորանց լայտնի էր շատ հին ժամանակներից։ Նրանք գիտէին երկնային մարմինների շարժման օրէնքները և կարողանում էին գուշակել արեգակի և լուսնի խաւարումները։ Շնորհիւ աստեղագիտութեան նրանք շատ վաղուց սկսեցին հաշուել, որ տարին ունի 366 օր, իսկ արեգակի և լուսնի շարժումները հաւասարեցնելու համար նրանք հաստատեցին նահանջ տարի. սրա համար Չինաստանում իւրաքանչիւր 19 տարուց տասն երկուսը ունին ամեն մէկը 12 ամիս, իսկ եօթը—ամեն մէկը 13 ամիս։ Ընդհանրապէս բնական և մաթեմատիկական գիտութիւնները նրանց մէջ բաւական առաջ գնացին և հասան որոշ աստիճանի զարգացման։ Բժշկականութիւնն ևս ծանօթ էր, և նրանց բժիշկներն իրանց գործում բաւական հմուտ էին։ Չինացիների մէջ մինչև այժմ էլ այն համոզմունքը կա, որ թէև երկինքը ուղարկում է հիւանդութիւններ, բայց միևնոյն ժամանակ նա տալիս է այդ հիւանդութիւնների դէմն առնելու միջոցներ ևս։ Վերջապէս նրանք ունէին ուսումնարաններ մատաղ սերնդի կրթութեան համար։ Մի խօսքով, ամենահին ժամանակները չինացիները նոյնն էին և նրանց մէջ գոյութիւն ունէին նոյն երևոյթները՝ ինչ որ այժմ է, միայն մի քանի փոփոխութիւններով։ Մինչև անգամ նրանց բարոյական ուղղութիւնն ևս նոյնն է. այն ժամանակներն ևս նրանք

չալտնի էին մի կողմից իրանց քաղաքավարութեամբ, համեստութեամբ, ներողամտութեամբ, արտակարգ աշխատասիրութեամբ, միւս կողմից խորամանկութեամբ, խարդախութեամբ, գոռոզութեամբ և շահասիրութեամբ, մի կողմ թողնելով անհամբերութիւնը և օտարներին խորշելու սովորութիւնը, որոնք չինացիներէ մէջ զարգացել են արդէն Կօնփուցիոսից յետոյ:

Պատմական տեղեկութիւններից մի քանիսը եղբակացիներ են տալիս, որ շատ հին ժամանակներում չինացիները սիրով ընդունում էին օտար երկրացիներին և նրանցից առնում իրանց համար շատ օգտակար սովորութիւններ: Շատ հաւանական է, որ հէնց այդ օտար երկրացիները, որոնց Չինաստանի կառավարիչները իրանց օգնական էին անում՝ զարգացրել են Չինաստանում աջ կուլտուրական տարրերը, որոնք մինչև այժմ էլ երևում են այդ երկրում:

Հին քաղաքակրթութեան հիմքերը չինացիները մշակել են իւրեանց առաջին թագաւորների, կամ Բողդիխանների, իմաստուն և խաղաղ կառավարութեան ժամանակ: Չինաստանի աջ ժամանակուայ կառավարութիւնը, ինչպէս և այժմ է՝ նահապետական — միապետական էր: Ժողովրդի հասարակական կողմութեան հիմքը կազմում էր ընտանիքը, որի գլուխն էր հայրը: Քաղաքական տեսակէտից ևս ժողովուրդը կազմում էր մի ընտանիք,

որի հայրը ինքը բողդիխանն էր, և ինչպէս որ ընտանիքի անդամները անպայման հպատակում էին հօրը՝ նոյնպէս և ժողովուրդը խորին յարգանք էր ցոյց տալիս իւր պետին և նրան ընդունում իբրև աստուածութիւն: Բողդիխանը երկնքի որդին էր, և նրա անձնաւորութիւնը սուրբ ու անձեռնմխելի էր, միայն, իհարկէ, քանի որ նա իւր գործերով համապատասխանում էր բարձրագոյն կամքին: Հակառակ դէպքում՝ նոյն իսկ երկինքը իրաւունք էր տալիս ժողովրդին՝ յալանել իւր բողոքն ու անբաւականութիւնը և մինչև անգամ դիմել բռնութեան: Չինաստանի հին գրքերում ասուած է. «Նրկնքի հալեացքը կարելի է տեսնել ժողովրդի հալեացքի մէջ. այն, ինչ որ չէ հաւանում երկինքը՝ կարելի է խմանալ՝ նայելով ժողովրդի ցանկութեան վրայ»: Չինաց տեսակէտից՝ թագաւորը մի անօթ է, իսկ ժողովուրդը ջուր: Ինչ ձև որ ունենում է անօթը՝ նոյն ձևն էլ ընդունում է ջուրը. ինչպէս որ թագաւորն է՝ աչնպէս էլ ժողովուրդը կլինի: Հիմնուելով այս հալեացքների վրայ՝ հին օրէնքագէտները թագաւորի բռնելիք ընթացքը սահմանափակում և հպատակեցնում էին հասարակական օրէնքներին, որից անցնել թագաւորը չէր կարող, եթէ ոչ՝ կզայրացնէր իւր հօրը — երկնքին: Չինաց հին իմաստունները ասում էին, որ տէրութեան հիմքը պէտք է կազմէ առաքինութիւնը և որ թագաւորը կարող է լինել ժողովրդի իսկական բարերարը՝

եթէ աշխատի ձեռք բերել ժողովրդի համար հետեւեալ իննը բարիքը.— ջուր, կրակ, մետաղներ, փայտ, հաց, այս իրերը շահաւէտ կերպով գործածելու կարողութիւն, իւր մեծաւորների հետ ապրելու համերաշխութիւն, առողջութեան պահպանութիւն և կեանքի ապահովութիւն։ Հիմնուելով չինաց տարեգիրների վրայ՝ Չինաստանի առաջին թագաւորները Ֆուսի-չի, խօան-տի, Եաօ, Իւ, Շուն և բողբիխանների մեծամասնութիւնը, — Սեա, (2205—1766 թ. Ք. ա.) և Շունի (1766—1122 թ. Ք. ա.) հարըստութիւնները՝ ճիշտ աշխիսի բարեբար թագաւորներ էին և նրանց թագաւորութեան ժամանակ ժողովուրդը բոլորովին բախտաւոր է եղել։ Աւելորդ չի լինի փոքր ինչ խօսել այս իմաստուն բողբիխաններից մի քանիսի և նրանց գործերի մասին։

Տարեգիրները առաջին բողբիխանին, որ կիսաառասպելական անձն է՝ կոչում են Ֆուսի-չի իմաստուն։ Նա թագաւորում էր 3468 թ. Ք. ա. Նորան են վերագրում կրօնական ծէսերի հիմնելը, նշանադրերի հնարելը։ Գէպի իւր հրատարակած օրէնքները ժողովրդին հաւատ ներշնչելու համար՝ Ֆուսի-չի ասաց, որ ինքն այդ օրէնքները արտագրել է ահարկու վիշապի մէջքից, որը երևացել է նորան խորին լճի միջից։ Սրանով նա ուզում էր ցոյց տալ, որ իւր օրէնքներն աստուածալին են, և նորանց ընդդիմացողը մեղաւոր կլինի Աստծու ա-

ռաջ։ Այս բողբիխանի դրաւոր լիշատակարանը կոչւում է Ի-Կինգ, այսինքն զիրք կերպարանափոխութեանց, որի մէջ մեկնւում է բոլոր տեսանելի աշխարհի ծագումը և կենդանական ու բուսական թագաւորութեան կերպարանափոխութիւնը տարուայ եղանակների համաձայն։ Առաջին իմաստուն միապետի մի քանի լաջորդներից լետոյ՝ թագաւորական դահը բարձրացաւ պատերազմաւէր խօան-տի, որի ժամանակ հնարուեցաւ կողմնացոյցը։ Չինաց տարեգիրներն ասում են, որ նա մեծ լաջորդութեամբ օգտւում էր կողմնացոյցից իւր պատերազմական արշաւանքների ժամանակ։ Սրա օրով տէրութիւնը բաժանուեցաւ տասը նահանգների և հնարուեցան ծանրութեան, երկայնութեան և ալլ չափեր։ Պատերազմական ալլը վաճառականական նպատակով նա տէրութեան մէջ ամեն կողմերից ճանապարհներ անց կացրեց և ծովային հաղորդակցութիւնը բարեկարգեց։ Ժողովրդի բարոյականութեան մակերևութը բարձրացնելու համար՝ հիմնեց տօնախմբութիւններ, որի ժամանակ զոհաբերութիւն էին անում Ամենաբարձրեալ հոգուն։

Խօան-տիից լետոյ նշանաւոր եղաւ Եաօ բողբիխանը 2350 թ. Ք. ա.։ Այս միապետից է սկսւում Չինաստանի ստույգ պատմութիւնը։ Եաօ կատարեալապէս կազմակերպեց իւր երկրի քաղաքացիական կեանքը։ Նրա օրով հաստատուեցաւ կանոնաւոր տոմարագիտութիւն, առաջին անգամ հրա-

տարակուեցան գրաւոր քրէական օրէնքներ: Այս օրէնքներով սահմանուած էր ծանր լանցանքների համար՝ լանցաւորի դէմքը զամղել, ոտները կամ ձեռները կտրել, ներքինացնել և մահով պատժել. ծանր, բայց ներման արժանի լանցանքի համար— աքսորել, թեթեւ լանցանքի համար— մտրակել: Ի նկատի էր առնուած նաև լանցանքի գիտակցօրէն կամ անգիտակցօրէն կատարուած լինելը և դրա համեմատ էլ որոշուած էր պատիժը: Մի քանի դէպքերում, օրինակ, երբ լանցաւորը լինում էր պառւած մօր միակ զաւակը՝ նրան չէին պատժում: Նաօ դեռ իւր կենդանութեան ժամանակ իրան չաջորդ և ընկեր ընտրեց Շուն՝ին և նրա հետ միասին էր կառավարում իւր պետութիւնը:

Շուն և Նաօ մտածում էին, որ թագաւորի անձնաւորութեան մէջ ինքը երկինքն է կառավարում ժողովրդին և որ թագաւորը երկնքի տեղակալն է: Ննթագրելով որ երկնքի և երկրի մէջ կալ մի խորհրդաւոր կապ՝ նրանք աշխատում էին հասարակական օրէնքները կազմակերպել երկնային օրէնքների համեմատ: Այս միապետները իրանց ժողովրդի համար ներկայանում էին իբրև առաքինութեան տիպարներ: Նրանք մտածում էին, որ ժողովրդի բարեկեցութիւնն ու բախտաւորութիւնը կախուած է նոյն իսկ իրանից, այսինքն նրա առաքինութիւնից: Իսկ առաքինութիւնը, նրանց կարծիքով, կախուած էր ոչ թէ օրէնքներից, այլ

աչն օրինակից, որը տալիս է բարձրագոյն իշխանութիւնը, այսինքն թագաւորը և նրա աստիճանաւորները: Նրանք մտածում էին, որ ժողովուրդը աւելի հակուած է իշխանաւորի ոչ թէ հրամանը կատարելու, այլ նրա օրինակին հետեւելու: Բացի դրանից՝ նրանք հասկանում էին, որ ժողովրդի մէջ առաքինութիւն հաստատողը լուսաւորութիւնն է. դրա համար նրանք աշխատում էին բարելաւացնել մատաղ սերնդի կրթութիւնը և կատարելագործել դպրոցական ուսումը: Նրբոր Նաօ մեռաւ՝ ժողովուրդը նրա համար երեք տարի սուգ պահեց: Շուն և նրա չաջորդը քրէական օրէնքները բաւական մեղմացրին և գործադրուող պատիժներից պահպանեցին միայն փախով ծեծելը, ունեցածը չարքունիս գրաւելը և աքսորը:

Շուն, Նաօ՝ի օրինակին հետեւելով՝ իրան ընկեր արաւ հանճարեղ պատանի իւ՛ին: Սրանց թագաւորութեան ժամանակ (2297 թ. Ք. ա.) անընդհատ տեղացող անձրևներից Չինաստանում հեղեղում եղաւ, և ամբողջ երկիրը ջուրը կոխեց: Քսան տարի շարունակ թագաւորները և ժողովուրդը աշխատեցին երկիրը ցամաքեցնել, որ և վերջապէս յաջողուեցաւ:

Նրկիրը ցամաքեցնելու ժամանակ իւ ամեն ջանք գործ էր դնում ուսումնասիրելու հողային պայմանները, նրանց արդիւնաւէտութեան չափը. միևնոյն ժամանակ երկրագործական նպատակով

հողերը բաժանեց զանազան մասերի: Դրանից լե-
տոյ նա դաշտերով անց կացրեց երկաջն ջրանցք-
ներ, որոնց մէջ հեղեղների ժամանակ ամբարուած
ջուրը գործ էր դնում երաշտութեան ժամանակ
ցանքերը ջրելու համար: Իւ՛րն յաջորդեցին մի
շարք իմաստուն միապետներ, Սեա և Շան անուա-
նեալ հարստութիւնից: Սրանց ժամանակ հետըզ-
հետէ հրատարակուեցան զանազան օրէնքներ, ո-
րոնց նպատակն էր ժողովրդի բարօրութիւնը:
Մեծ ուշադրութիւն դարձուեց գիւղատնտեսութեան
վրայ, որի զարգացման մէջ անմիջապէս շահ ունէր
նաեւ կառավարութիւնը: Դրա համար էլ բոլոր
դաշտային պարագմունքները տեղի էին ունենում
պետական աստիճանաւորների անմիջական հսկո-
ղութեան տակ: Կառավարութիւնը ցոյց էր տալիս
դաշտը հերկելու, ցանելու և հնձելու ժամանակները:
Նա նոյնպէս կանոններ էր հրատարակում, թէ ինչ
կերպով և ինչո՞վ պէտք է բարեբեր անել հողը:

Անցաջող տարիները ժողովրդի կարիքները
հոգալու համար՝ կառավարութիւնը հիմնեց հացա-
հատիկների շտեմարաններ, որոնց մէջ ամբարուած
էր պետութեան եռամեալ եկամտի չորրորդ մասը:
Այս հացահատիկները փշանալուց ազատ պահելու
համար՝ փոխ էին տրւում սերմնացու չունեցող
երկրագործներին, աշնանը վերադարձնելու պալ-
մանով: Իսկ անցաջող տարիները հացը բաժանւում
էր ձրիաբար:

Այս խելացի կարգադրութիւնների շնորհիւ
ժողովրդի բարօրութիւնը ծաղկած զրութեան մէջ
էր: Ժողովուրդը հանգիստ ու խաղաղ ապրում էր
այս իմաստուն և համեստ կառավարութեան ժա-
մանակ: Այդ ժամանակ պետութիւնը ամրացաւ և
ընդարձակեց իւր սահմանները: Շան *) հարստու-
թեան վերջին բողոքիսանների ժամանակ Չինաս-
տանում կային 24 աւատական իշխանութիւններ,
որոնք ենթարկւում էին բողոքիսանին: Սրանից լե-
տոյ Չինաստանի պատմութեան մէջ առաջ եկաւ
ճգնաժամ:

Վերջին բողոքիսանը Ին հարստութիւնից՝ լայ-
տնի էր իւր խոտասիրտ և բարբարոս բնաւորու-
թիւնով: Ո՛չ ժողովուրդը և ոչ իշխանները նրան
չէին սիրում: Այս հանգամանքից օգուտ քաղեց
Ջէու իշխանութեան արի ու քաջասիրտ կառավա-
րիչը. նա ապստամբեց բարբարոսի դէմ և նրան
դրկեց գահից: Բողոքիսանի գահը բարձրանալուց
լետոյ վախենալով, թէ մի գուցէ խոչընդոտներ
չարուցուին իւր գահակալութեան դէմ՝ նա սկսեց
բազմացնել իւր կուսակիցների թիւը. սրա համար
նա շատ գաւառներ պարգևեց իւր մտերիմներին,
ազգականներին և բարեկամներին. ախպէս որ մա-
նըր աւատական իշխանութիւնների թիւը նրա ժա-
մանակ հասաւ 156-ի: Սրանից առաջ եկան բաղ-

*) 1401 թուից Քր. ա. Շան անունը փոխուեցաւ Ին:

մաթիւ խառնակութիւններ, որոնք մի ամբողջ դար զղրգեցնում էին չինաց պետութիւնը: Այս խառնակութիւններն աւելի սաստկացան մանաւանդ Կօնֆուցիոսի ծնունդու ժամանակները: Բողոքիսանի դրութիւնն անտանելի էր: Բաժանուած զանազան մանր իշխանութիւնների, որոնք կախումն ունէին բողոքիսանից միայն անունով՝ պետութիւնը գրեթէ կործանման դրութեան էր հասել: Այս իշխանութիւններից ամեն մէկն աշխատում էր իւր սահմաններն ընդարձակել ի վնաս հարեան գաւառների, և այսպիսով պատճառ դառնում այլ և այլ խառնակութիւնների և ներքին պատերազմների: Չինաց այս ժամանակուայ պատմութիւնը լիքն է զանազան պատմութեան, որոնց մէջ խօսուած է բազմաթիւ եղբայրասպանների, ինտրիգների, մատնութիւնների և բողոքիսանի դէմ եղած դաւադրութիւնների մասին: Կուլտուրական մշակուած սկզբունքները հետզհետէ մոռացւում և խորտակւում էին: Արօնքն ատելով ատում էին, օրէնքներն ալլես չէին գործադրում, ուժեղները հարստահարում էին թուլերին, մեծ հողատէրերը յափշտակում էին մանր կալուածատէրերի հողերը և նրանց թողնում առանց հողի: Իսկ այս վերջիններն ստուարացնում էին թափառաշրջիկների և մուրացիկների խմբերը, որոնք ոչ իշխանութիւն էին ճանաչում, ոչ օրէնք: Առաջ եկան մինչև այն ժամանակ չտեսնուած գողութիւններ, աւազակութիւններ, որոնց

ամբողջ ծանրութիւնն ընկնում էր այն ժողովրդի վրայ, որը անվերջ պատերազմական լծի տակ ճնշուած՝ պէտք է օգնէր ու ապրուստ հալթալթէր անհամար զօրաց բանակներին: Չինաց պատմութիւնից երևում է, որ այդ բանակները երբեմն բաղկանում էին հարիւր հազար մարդուց: Իսկ ժողովուրդըն ստիպուած էր ամրոցներ կառուցանել և կրել պատերազմական ժամանակների բոլոր հոգսերն ու տառապանքները: Բացի սրանից՝ ժողովուրդը պէտք է միջոցներ տար ազնուականներին ու իշխաններին՝ պալատներ կառուցանելու, նրանց կառքերը թանկագին քարերով զարդարելու և զանազան խնջոյքներ և տօնախմբութիւններ սարքելու համար: Այս խառնակութիւնները շարժեցին չինացիւր համբերատարութիւնով և աշխատասիրութիւնով լատնի ժողովրդի տրտունջը, որը պարզ արտայայտուած է այն ժամանակուայ ժողովրդական երգերում: Ժողովուրդը ճնշուելով ծանր հարկերից և ենթարկուելով անտանելի տանջանքների՝ քիչ էր մնացել, որ վայրենաճաչ և հասնի նախնական բարբարոս դրութեան: Հասել էր ամեն ինչ վերափոխելու ժամանակը: Պէտք էր պետութեան մէջ կարգ ու կանոն հաստատել, պէտք էր ժողովրդին հրաւիրել նոր կեանքի: Այսպիսի անիշխանութեան և անզուսպ բռնակալութեան ժամանակ անհրաժեշտ էր վերջապէս, որ երեւան դային բարքերի վերանորոգիչներ և իրանց ազդու ձայնով ցոյց տալին ժո-

ղովըդին ու նրա կառավարիչներին ճշմարտութեան ճանապարհը:

Յիրաւի այդ ժամանակներն սկսեցին ասպարէզ գալ աֆալիսի մարդիկ, որոնք աշխատում էին որեւիցէ կերպով խաղաղութիւն ու հանգստութիւն մտցնել պետութեան մէջ: Սրանց մէջ կային զօրապետներ, որոնք մտածում էին հասնել ցանկացեալ նպատակին զէնքի ոյժով, քաղաքական կամ դիպլոմատիական *) հնարներով: Վերջապէս ասպարէզ եկան փիլիսոփաներ, որոնք երկրի փրկութիւնը գտնում էին ժողովրդի կրօնական և բարոյական կեանքի բարեփոխման մէջ: Սրանք առաջարկում էին հաստատել քաղաքացիական և քրէական օրէնքների վրայ հիմնուած խիստ կարգապահութիւն: Պահանջում էին ձեռք առնել մի շարք միջոցներ, որոնցով կարելի էր բարձրացնել ժողովրդի տնտեսական դրութիւնը, բարեփոխել դիւղատնտեսութիւնը և արուեստագիտութիւնը:

Այս փիլիսոփաներից ամենանշանաւորներն էին Լաօ-Ջի, Կօնֆուցիոս և նրա աշակերտը Մենցիոս:

Լաօ-Ջի հաստատեց չինաց ժողովրդի մէջ մինչև այժմ էլ տարածուած կրօնական վարդապետութիւնը: Այս վարդապետութիւնը հիմնուած է արև-

*) Այն ժամանակ ևս դիպլոմատիան մեծ նշանակութիւն ունէր. այս երևում է ժամանակի հետեւեալ առածից «Երեք մատաչափ լեզուն հարիւր հազար զօրք արժէ»:

Երեան Ասիայի աֆն հին աշխարհագրեցողութեան վրայ, որով տիեզերքի մէջ գոյութիւն ունեցող բոլոր երևոյթների պատճառը համարւում է մի բարձրագոյն լաւիտենական հոգեկան էութիւն, իսկ մարդկային հոգիները—բղիժած այդ էութիւնից: Սրա համար Լաօ-Ջի քարոզում էր հոգեփոխութիւն, մի հաւատ, որով որոշւում էր, թէ մեղքերով չապականուած հոգին կրկին վերադառնում է գէպի իւր աստուածային սկզբնապատճառը, աֆն-ինչ մեղաւոր և ապականուած հոգին դատապարտւում է թափառելու ալեկալ կենդանիների մէջ՝ մինչև որ մաքրուի: Ուստի հոգին անարատ պահելու համար՝ Լաօ-Ջի քարոզում էր նաև առել աֆն ամենը՝ ինչ որ արտաքին է, ճնշել ցանկասիրութիւնն ու կիրքը, և հրապարակով լաւտնում էր, որ այս ճանապարհով ձեռք բերուած հոգեկան խաղաղութիւնը ամենամեծ բարիքն է աշխարհումս:

Այս վարդապետութիւնը հնդկական ծագում ունի և, ինչպէս ասացինք՝ մինչև այժմ էլ կալ Չինաստանում. նա տարածուած է գլխաւորապէս ամբոխի մէջ, բայց չէ ունեցել աֆն լաջողութիւնը՝ որը վիճակուած էր չինաց հռչակաւոր փիլիսոփայ Կօնֆուցիոսին, որի կեանքի և ուսման նկարագրութեանը կղաւնանք հիմալ:

1005
2039



ԳԼՈՒԽ Ա.

Վօնֆուցիոսի տոհմագրութիւնը: — Նրա ծնունդը, մանկութիւնը և պատանեկութիւնը: — Պաշտօն ստանձնելը: — Պաշտօնավարութեան մէջ ունեցած յաջողութիւնը:

Չինաց տարեգիրները իրանց վերանորոգչի տոհմագրութիւնը սկսում են Խօան-տի կիսաառաւ-պելական բողբիխանից *), որը հնարել է կողմնացոյցը (2637 թ. Ք. ա.): Նրանց ասելով՝ Վօնֆուցիոսի նախնիքներից շատերը յայտնի էին իրանց մեծ ընդունակութիւններով և պետութեան մէջ վարում էին կառավարչական, զինուորական և քաղաքացիական պաշտօններ: Սրանցից մէկի համար պատմում են, որ շատ սիրում է եղել հին սովորութիւններ ու պատմութիւններ—ժառանգական բնորոշ յատկութիւն, որը և անցել է Վօնֆուցիոսի վրայ: Վօնֆուցիոսի հօր անունն էր Շու-Լիան-Խօ, որի մասին պատմում են հետեւեալը. Խօ զինուորա-

*) Չինաստանում, որտեղ նշանաւոր տոհմը կարեւոր նշանակութիւն ունի իմաստունը չէր կարող ծնուել ան-նշան ծնողներից: (Խբիտանֆ):

կան պաշտօնեայ էր և յայտնի էր իւր տարօրինակ մեծ հասակով, ուժով և զարմանալի քաջութիւնով, որի մասին հրաշքներ են պատմում: Նա կառավարիչ նշանակուեց Չեու քաղաքի (այժմեան Չեուխի-են) վրայ, որ գտնւում էր Լու իշխանութեան մէջ: Խօ ունէր երկու կին. առաջին, գլխաւոր կնոջից նա ունէր ինը աղջիկ, իսկ երկրորդից մի որդի, որը հիւանդոտ լինելով՝ շուտով մեռաւ: Խօ ցանկանում էր իրանից լետոյ արու ժառանգ ունենալուտի երբ որ առաջին կինը մեռաւ՝ նա, չնայելով իւր 70 տարեկան հասակին՝ վճռեց կրկին ամուսնանալ: Երկար տարուքերուելուց լետոյ նա կամեցաւ հարսնացու ընտրել քաղաքի մէջ յայտնի իեօն ընտանիքից, որի մէջ կային երեք քույրեր: Ջահէլ աղջիկների հալրը թէև շատ էր ցանկանում ազգականութիւն ունենալ Շու-Լիան-Խօի հետ՝ բայց միևնոյն ժամանակ չէր ստիպում իւր աղջիկներին դիմել այդպիսի անհաւասար ամուսնութեան: Նա աղջիկներին կանչելով իւր մօտ՝ յայտնեց նորանց Խօի առաջարկութիւնը, և խօսելով փեսացուի նշանաւոր ծագման մասին և ալն մասին, որ Խօ, չնայելով ծերութեան՝ շատ ուժեղ և քաջ է և վարում է քաղաքապետի նշանաւոր պաշտօնը՝ ասաց.

— Ես շատ ցանկանում եմ, որ Խօի առաջարկութիւնը ընդունուի: Չեղանից որը կկամենայ նրա կիներ լինել:

Նրկու մեծ քորերը լուցին, իսկ կրտսերը, որի անունն էր Չինգոզի, պատասխանեց.

— Ինչո՞ւ էք մեզ հարցնում: Մի՞թէ կամքը ձերը չ'է այս բանի մէջ:

Այն ժամանակ հալըը նորան առաջարկեց ամուսնանալ Խօ'ի հետ: Չինգոզին համաձայնուեց: Ինն ամսից լետոյ նրանցից ծնուեցաւ Չինաստանի ապագայ օրէնսդիրը: Չինաց տարեգիրները Կօնֆուցիոսի կեանքի և գործունէութեան մասին պատմելիս՝ նորան չեն վերագրում հրաշալի կամ առասպելական դէպքեր. բացառութիւն է կազմում միայն նրա ծննդեան շրջանը: Այնտեղ ահա երևան է զալիս մի ինչ-որ առասպելական գերբնական տարր: Նոյն իսկ փիլիսոփայի լղութիւնը, արգանդում եղած շրջանը և վերջապէս ծնունդը զարգարուած են այլ և այլ հրաշալի դիպումներով: Առասպելների մէջ ասուած է, որ ամուսնանալուց լետոյ ջահէլ կինը, վախենալով թէ մի գուցէ զաւակ չի ծնի ամուսնու ծերութեան պատճառով՝ խնդրեց նրան իւր հետ միասին բարձրանալ Նի-Կիէու անուանեալ բլուրի վերալ: Այստեղ նա ջերմ աղօթքով դիմեց Շան-Տի անունով բարձրագոյն էակին: Նրա աղօթքը լսելի եղաւ, նա լղացաւ: Նրբոր նա բլուրից իջաւ՝ ծառերն ու խոտերը երկրպագեցին նորան: Խօ'ի պարտէզում երեսց Կի-Լին հրէշը, որի երեսը առհասարակ շաղկապւում էր որեւէ մեծ դէպքի հետ: Հրէշը իւր փորից դուրս ձգեց մի լասպի-

սի քար: Փարի վրայ գրուած էին հետեւեալ խօսքերը. «Նրբոր Ձու հարստութիւնը (թագաւորական տոհմ) կործանման մօտ կլինի՝ այն ժամանակ կըծնուի մի մանուկ, մաքուր ինչպէս բիւրեղանման ջուրը. նա թագաւոր կլինի առանց թագաւորութեան»: Չինգոզին լղի եղած ժամանակ երազում տեսել է սև Տի'ին. սա ասել է նորան, որ նա կծնի իւր որդին հաստարմատ թթենի ծառի տակ: Նրբոր ծնունդու օրերը մօտեցան՝ Չինգոզին հարցրեց ամուսնուն, թէ ձրտեղ է գտնւում այդ ծառը: Ամուսինը ցոյց տուաւ նրա տեղը: Չինգոզի ցանկացաւ գնալ այնտեղ: Խօ Թաչեցաւ կնոջ ցանկութեան համար, բայց իմանալով նրա որդու մասին՝ համաձայնուեց և հրամայեց բոլոր անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնել: Մանկան ծնուելու զիշերը բլուրի վրայ օդի մէջ շարունակ սաւառնում էին երկու վիշապներ (դրակոններ) և պահպանում բլուրը աջ ու ձախ կողմից: Նրկնքում հնչում էին զմայլեցուցիչ ներդաշնակ ձայներ, և աներևոյթ ոգիները երգում էին. «Նրկինքն ուրախութիւնից սառածում է սուրբ որդու ծնունդու ժամանակ»: Նրբոր մանուկը աշխարհ եկաւ՝ գետնից սկսեց քլքլալ մի մաքուր տաք ջրի աղբիւր և հէնց որ մանկանը լողացրին՝ իսկոյն աղբիւրը անհետացաւ: Նոյն իսկ նորածինը արտաքուստ համարւում էր տարօրինակ և հրէշալին, — օրինակ, նրա բերանը նման էր լճի, շրթունքները — եղան, մէջքը — վիշապի և այլն: Տարեգիր-

ներն, իհարկէ, այս նշաններին ալլաբանական մեկնութիւն են տալիս: Բայց թողնենք առասպելները և դիմենք փաստերին:

Կօնֆուցիոսի իսկական կենսագրութիւնը մեծ խնամքով կազմել են նրա աշակերտները: Այս կենսագրութիւնը լիքն է շատ հետաքրքիր փաստերով, որոնք մեզ ծանօթացնում են ինչպէս մեծ փիլիսոփայի անձնաւորութեան՝ նոյնպէս և նրա ժամանակակից բարքերի ու սովորութիւնների հետ:

Զինաց ժամանակագրական աղիւսակները ցոյց են տալիս, որ Կօնֆուցիոս ծնուել է Լինգ-Վանգ (իմաստուն թագաւոր) բողոքիսանի թագաւորութեան քսաներորդ տարուայ տասներորդ ամսի 21-ին, այսինքն 551 թ. Ք. ա.: Կօնֆուցիոսի մանկութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ կան: Յայտնի է որ նա երեք տարեկան ժամանակ զբոսաց հօրից. մօրը չափազանց հնազանդ էր, մեծերին պատուող, հանդարտ, ծանրաբարոյ և իւր տարիքին անհամապատասխան խոհեմ: Նա զբաղւում էր զանազան ծէսեր և զոհաբերութիւններ խաղալով: Պատմում են, որ նա լաճախ հաւաքում էր իւր հասակակիցներին և նրանց հետ անում այն ամենը՝ ինչ որ տեսել էր մեծերից, օրինակ, նշանաւոր մարդկանց հանդէսներով և չուքով ընդունելու ժամանակ. կամ սեղանի վրայ կարգով դարսում էր այն ամենը, ինչ որ ձեռքն էր ընկնում և զբաղւում ցոյց տալիս, որ իբր թէ զոհաբերութիւն է անում նախ-

նեաց. լետոյ երեսի վրայ էր ընկնում և գլուխը գետնին խփելով կատարում այն բոլոր ծէսերը, որոնք ընդունուած էին այսպիսի դէպքերում: Այս մանկական խաղերի մէջ շատ վաղ երեաց ապագայ Կօնֆուցիոսը, որ յայտնի էր իբրեւ հին սովորութիւնների ամենաեռանդուն պաշտպան:

Կօնֆուցիոսի դպրոցական կրթութեան մասին ևս շատ քիչ տեղեկութիւններ կան: Աւանդութիւն կայ, որ երբ Կիէու (սկզբում այսպէս էին կոչում Կօնֆուցիսին) եօթը տարեկան դարձաւ՝ մայրը, որ սկզբում ինքն էր պարապում իւր որդու կրթութեամբ՝ ցանկացաւ նրա համար մի վարժապետ գտնել. բայց ինքը դեռ շատ ջանք էր լինելով՝ չվստահացաւ իւր տանն ընդունել որեւէ տղամարդի, ուստի Կիէու՝ ին տուաւ հասարակական դպրոց: Զինաստանում հասարակական դպրոցները հիմնուեցան առաջին բողոքիսանների օրով. սրանք լաւ էին հասկանում, որ միայն լուսաւորութիւնը կարող է հաստատել ժողովրդի մէջ բարի առաքինութիւն, ուստի և աշխատում էին բարւոքել մատաղ սերունդի կրթութիւնը և կատարելագործել դպրոցական ուսումը: Նրանց օրով դպրոցներ բացուեցան բոլոր քաղաքներում, մինչև անգամ գիւղերում: Այս դպրոցներում կրթւում էին ամեն դասակարգի մանուկներ, առանց խտրութեան: Իւրաքանչիւր տղայ, ութ տարեկան դառնալով՝ կարող էր մտնել ստորին դպրոցը, որտեղ նախ աւանդ-

ւում էին քաղաքավարական կանոններ, լետոյ սո-
վորեցնում էին ծէսեր, երաժշտութիւն, նետաձգու-
թիւն, կառավարութիւն և թուաբանութիւն: Երբոր
լրանում էր տասն և հինգ տարին, նրանցից աւե-
լի ընդունակները,—ով որ էլ լինէր, բողոքիսանի
որդի, թէ վերջին գիւղացու, միենոյն էր,—մտնում
էին բարձրագոյն դպրոց, ուր աւանդւում էր բա-
րոյական փիլիսոփայութիւն: Այտք է ասել, որ այս
դպրոցներում կրթութիւնը շատ քիչ էր զարգա-
ցնում աշակերտների ինքնուրոյն մտածողութիւնը.
այստեղ գլխաւորապէս աշխատում էին բերանացի
սովորեցնել նախնիքներից կտակուած բարոյական
խրատներն ու տեղեկութիւնները: Կօնֆուցիոսը
մտաւ ահա այդպիսի մի դպրոց. այստեղ նրան կո-
չեցին Չունգ-Նի: Շուտով Չունգ-Նի իւր ջանասի-
րութիւնով, հեղութիւնով, խոնարհութիւնով և ուս-
ման մէջ ունեցած լաւաջաղիմութիւնով գերազան-
ցեց իւր դասակից ընկերներին: Տասնեօթ տարե-
կան հասակում նա օգնական նշանակուեցաւ իւր
վարժապետին, Պինգ-Չունգ լալտնի գիտնականին,
որ միենոյն ժամանակ և քաղաքապետ էր այն
քաղաքի վրայ, որտեղ ապրում էին Կօնֆուցիոսը
և իւր մայրը: Երիտասարդ Չունգ-Նի այս պաշտօնի
մէջ աշխատում էր չգրգռել իւր ընկերների ինքնա-
սիրութիւնը. նա խրատներով չէր ձանձրացնում
նրանց, այլ շարժում էր նրանց եռանդը իւր ան-
բիծ վարքով: Դպրոցում եղած բոլոր ժամանակ նա

պարապում էր անդադրում ջանասիրութիւնով, ու-
սումնասիրելով հին հեղինակների գրուածքները,
որոնք ահագին ազդեցութիւն ունեցան նրա մտքի
և սրտի զարգացման վրայ: Այսպիսով դեռ երիտա-
սարդութեան ժամանակ Կօնֆուցիոսին լաջողուե-
ցաւ ձեռք բերել բազմաթիւ և բազմազան տեղե-
կութիւններ, որոնց հարստութիւնը վերջերը ապ-
շեցնում և զարմացնում էր լսողներին:

Ուսումնաւարտելուց լետոյ՝ Կօնֆուցիոսը մօր-
ցանկութեան համաձայն պետական ծառայութիւն
մտաւ: Նորան լանձնեցին վաճառականական ոստի-
կանի համեստ պաշտօնը, որի պարտաւորութիւնն
էր հսկել հրապարակում և խանութներում ծախ-
ուող մթերքների թարմութեան վրայ: Կօնֆուցիոսը
ամենեւին չվիրաւորուեց այսպիսի ստոր պաշտօնի
համար, չնայելով որ լալտնի ընտանիքի զաւակ էր.
նա ընդհակառակը մեծ եռանդով և բարեխղճու-
թեամբ վերաբերուեց դէպի այդ պաշտօնը և աշ-
խատեց անձամբ մտնել ամեն բանի մէջ: Նա լա-
էր հասկանում, որ այսպիսի համեստ պաշտօնով
ևս կարող էր օգտակար լինել իւր համաքաղաքա-
ցիներին և հալրենիքին: Վաղ առաւօտուանից Կօն-
ֆուցիոսը փորձառու մարդկանց ուղեկցութեամբ
չըջում էր բոլոր վաճառանոցներն ու խանութ-
ները, զիտելով կանաչեղէնները, միսը և հացը,
միենոյն ժամանակ խրախուսելով ազնիւ վաճառ-
կաններին և խիստ լանդիմանելով ու պատեւելով

խարդախներին: Այս խելացի միջոցների շնորհիւ՝ նա հասաւ փառաւոր հետեանքների: Գործից ազատ ժամանակ նա համարեա միշտ տանը մեծ եռանդով պարապում էր գիտութիւնով, միայն երբեմն զբօսանքի էր գնում քաղաքից դուրս, որպէսզի մօտից ծանօթանայ երկրագործի կացութեան և տընտեսութեան հետ: Նա այցելում էր նաև պահեստի ցորենի շտեմարանները: Այս զբօսանքները նրա համար ի զուր չանցան. աչտեղ նա տընտում էր ձեռք բերել այն գիտութիւնները, որոնց չէր գըտնում իւր գրքերի մէջ: Երկրագործներին հարց ու փորձ էր անում նրանց մշակած հողի մասին, նրան աւելի պտղաբեր անելու միջոցների մասին, հացահատիկները ծլելուց ազատ պահելու միջոցների մասին և այլն: Մի խօսքով նա մեծ ուշադրութեամբ հետեում էր այն ամենին՝ ինչ որ թէկուզ ամենափոքր չափով վերաբերում էր իւր պարտաւորութեան: Այսպիսի ջանասիրութեան համար նա արժանացաւ իւր համաքաղաքացիների ընդհանուր խորին յարգանքին և իմաստութեան այն մեծ հըռչակին, որ նրա անուան հետ ընդ միշտ կապուած մնաց:

Կօնֆուցիոսը 19 տարեկան էր, որ ամուսնացաւ մի աղնուազարմ օրիորդի հետ: Մի տարուց յետոյ նա մի որդի ունեցաւ: Լու իշխանը Կօնֆուցիոսի որդու ծննդեան լուրն առնելով՝ նորան ընծայ ուղարկեց մի զոյգ սաղան ձուկ: Այս ձուկը

չինարէն Լի է կոչւում, և Կօնֆուցիոսը իշխանի սիրալիր ուշադրութեան համար՝ ի նշան շնորհակալութեան իւր որդուն անուանեց Լի: Բացի որդուց՝ Կօնֆուցիոսը մի աղջիկ ևս ունեցաւ:

Այս ժամանակները Կօնֆուցիոս պետական ծառայութեան մէջ ևս աւելի առաջացաւ: Իշխան Լու նրան նշանակեց վարելահողերի, անտառների ու հօտերի տեսուչ և նորան կատարեալ իրաւունք տուեց փոփոխել հին կարգերը և մօցնել նորերը: Այս պաշտօնի մէջ էլ Կօնֆուցիոս մեծ ընդունակութիւններ ցոյց տուեց:

Նա խորասուզւում էր գիւղատնտեսական ամենաչնչին մանրամասնութիւնների մէջ, և նրա ուշադրութիւնից չէր վրիպում ոչ մի բան որ թէկուզ փոքր ինչ կարող էր նպաստել գիւղատընտեսութիւնը բարելաւելու գործին: Նա հասնում էր իւր նպատակին կամ համոզելով և խնդրելով, կամ սպառնալով ու պատժելով և կամ ժամանակին օգնութեան հասնելով: Նրա ջանքերը մեծ յաջողութեամբ պսակուեցան: Նրա կառավարութեան ժամանակ երկրագործի կացութիւնը չառաջադիմեց, անուշադրութեան մատնուած դաշտերը ալեծածան արտերով ծածկուեցան, ալգինները և ընտանի կենդանիների տեսակները բազմացան և կատարելագործուեցան:

ԳԼՈՒԽ Բ.

Մօր մահը.—Պաշտօնաթող լինելը.—Վօնֆուցիոս առաջին անգամ ասպարէզ է գալիս իբրև հասարակական ուսուցիչ։—Նռամեայ սուգ։—Գիտութիւնով և արուեստներով պարագելը։—Վօնֆուցիոս հռչակում է։—Նրա առաջին ճանապարհորդութիւնը և տեսական գիտութիւնների դործադրութիւնը։—Երաժշտութիւնով պարագելը։

Վօնֆուցիոս չնորհիւ իւր արդիւնաւէտ գործունէութեան՝ բոլորովին զատուում և աչքի էր ընկնում իշխանութեան միւս աստիճանաւորների միջից. ամեն ինչ խոստանում էր նորան ամենափալուն ապագայ։ Բայց մօր լանկարծակի մահը ստիպեց նրան ծառայութիւնը թողնել և երեք տարով հեռանալ հասարակական գործունէութիւնից։ Նրա մայրը մեռաւ 528 թ. Քր. ա.։

Զինաստանում հին ժամանակուանից մի սովորութիւն կար, որ պահանջում է, որ որդիքը եռամեայ սուգ պահեն իրանց հօր կամ մօր մահունից լետու։ Այս ղէպքում քաղաքային և գիւղւորական աստիճանաւորները պէտք է պաշտօնաթող լինին և կարող են կրկին ծառայութեան մը-

տնել՝ միայն սուգի եռամեայ շրջանն անցնելուց լետու։ Այս բանը չինացիների մէջ կոչւում է վեքա կանգնումն։ Նթէ ընտանիքում որդի չկալ՝ աչն ժամանակ այս պարտքը պէտք է կատարէ թոռը, ծոռը կամ հոգեպաւակը։ Սուգի ժամանակ չէ կարելի գինի խմել, տնից ելնել, կնոջ հետ լաքաբերութիւն ունենալ և խնջուքներում լինել *)։ Վօնֆուցիոսը խիստ լարգում էր հին ծէսերը. դրա համար էլ ամենաչն ճշտութեամբ կատարում էր աչն ամենը՝ ինչ որ պահանջում էին հին սովորութիւնները։ Պաշտօնաթող լինելով՝ նա ամենից առաջ զբաղուեց մօր մարմինը թաղելով, ցանկանալով թաղել նրան՝ քսան տարի առաջ մեռած հօր հետ մի ընդհանուր գերեզմանում։ Թաղման ժամանակ Վօնֆուցիոս առաջին անգամ ասպարէզ եկաւ իբրև հասարակական ուսուցիչ։ «Կենդանութեան ժամանակ միացածները, ասաց փրկիստիան, չպիտի բաժանուին նաև մահուանից լետու։ Նրանց մարմինները միմեանց մօտ դրէք. մարդու մարմինը դէպի արեւելք, կնոջ մարմինը դէպի արեւմուտք, գլուխները դէպի հիւսիս, իսկ ոտները դէպի հարաւ։ Գիշակեր կենդանիներից պահպանելու

*) Զինաց սուրբ գրքերում ասում է. «Ով որ սուգ է պահում՝ նրա համար ոչ կերակուրն է համեղ, ոչ երաժշտութիւնն ուրախալի և ոչ կեանքը հանգիստ... Որդին միայն երեք տարուց լետու է թողնում մօր գերկը, սրա համար էլ եռամեայ սուգը պարտադիր է ամենին»։

համար՝ նրանց մարմինները զրէք զագաղի մէջ, որը շինուած լինի չորս մատնաչափ հաստ տախտակից՝ թաթախուած ձիւթով կամ ծածկուած լակով։ Իսկ որպէսզի նրանք շուտով չփչանան՝ զրէք հողէ բլուրների վրայ։

Այս թաղումը շատ բաներով զանազանուած էր այն ժամանակուայ թաղման սովորութիւններից։ Կօնֆուցիոսի ժամանակակիցները բոլորովին մոռացել էին նախնեաց սովորութիւնները և հանգուցեալներին թաղում էին այնպէս՝ ինչպէս պատահում էր, մի քանի օր սուգ էին պահում և զրանից լետոյ բոլորովին մոռանում նրանց։ Կօնֆուցիոս այսպէս չէր մտածում։ Իւր առաջին քարոզութիւններով նա խիստ լանդիմանում է իւր համաքաղաքացիներին դէպի հանգուցեալները յարգանքով չվերաբերուելու և ընդհանուր վարուց պակասութեան համար. ասում է, որ մարդիկ կորցրել են ամօթն ու խիղճը և ամենավրդովեցուցիչ բաների վրայ նայում են կատարեալ անտարբերութեամբ։ Նա աշխատում է հասկացնել ժողովրդին, որ մարդը երկրի թագաւորն է, որին ամեն ինչ հպատակուած է նրա վրայ, մարդը ամենաթանկագինն է երկնքի տակ ապրող բոլոր կենդանի արարածների մէջ, նա արժանի է խորին յարգանքի, և անտարբերութեամբ վերաբերուել դէպի նրա հոգու անօթը, մարմինը՝ կնշանակէ վայր ձգել մարդու արժանապատուութիւնը և ստորացնելով՝

հասցնել նրան կոպիտ ու անբան անասունի աստիճանին։ Նա ասում էր.

— Սիրեցէք միմեանց և բոլոր մարդկային ցեղը, այն չղթան, որի մէջ ձեզանից ամեն մէկը մի առանձին օղակ է կազմում։ Դուք ամենքդ ամեն ժամանակ և ամեն բանով պարտական էք հանգուցեալներին։ Նիւթ մէկը չլինի՝ միւսն էլ չի լինի։ Ապրողները պէտք է չնորհակալ լինին հանգուցեալներից նրանց կենդանութեան ժամանակ ցոյց տուած բարեգործութիւնների համար։ Հանգուցեալներին գոհունակութիւն ցոյց տալու ամենահասարակ և բնական ձևը կայանում է նրանց լիշատակը յարգելու մէջ այն ծէսերով, որոնք տեղի էին ունենում կայսերութեան առաջին ժամանակները։ Անկասկած մեր սերունդներն ևս իրանց կարգին կտան մեզ այն յարգանքը, որը մենք տալիս ենք մեր նախնիքներին։ Այն յարգն ու պատիւը, որը դուք կտաք ձեր նախորդներին՝ կվերադարձնեն ձեզ ձեր յաջորդները իրանց կարգին։

Կօնֆուցիոսի օրինակին շատերը հետեցին. նրա խրատները անհետեանք չմնացին։ Մոռացուած հին սովորութիւնները յարութիւն առան, վերանորոգուեցան և մինչև այսօր էլ գործադրւում են։

Կօնֆուցիոս մօրը թաղելով՝ սկսեց պահել սահմանաւ եռամեայ սուգը։ Այդ ժամանակ նա միաշնակութեան մէջ էր ապրում, ողբալով իւր կորուստը և զբաղուելով գիտութիւններով։ Հաւա-

նական է, որ այս միջոցին նա կատարելապէս ուսումնասիրեց այն ամենը, ինչ որ չէր կարողացել սովորել դպրոցում կամ ծառայութեան մէջ:

«Սովորել ամեն օր և կատարելագործուել նոյնպէս արդեօք հաճելի և դուրեկան չէ, ինչպէս հեռի երկրից եկած բարեկամիդ հանդիպելը», ասում է Կօնֆուցիոս: Նրա կարծիքով՝ մարդս իւր բոլոր ազատ ժամանակը պէտք է գործ դնէ սովորելու վրայ:

Շրջապատող կեանքի մռայլ ու դառն իրականութիւնը չէր կարող բաւականացնել մեծ փիլիսոփային—և նա սկսեց մխիթարութիւն որոնել անցեալ ժամանակների մէջ: Կօնֆուցիոսը իրան ամբողջովին նուիրեց հին սուրբ գրքերի և իմաստուն ու մեծ վեհապետներից կարգուած օրէնքների ուսումնասիրութեան: Վերջերը Կօնֆուցիոս իւր բարոյական բարձր գաղափարները քարոզում էր հին իմաստունների բերանով: Հին իմաստուն վեհապետներին, օրինակ, Սաօ, Շուէն, Իւ և ուրիշներին նա համարում էր իբրեւ տիպարներ կատարեալ մարդկանց, իբրեւ օրինակներ բարոյական կատարելութեան և լաւագոյն կառավարութեան: Նա իւր ամբողջ կեանքում վճռեց գործել այս օրինակների և տիպարների համեմատ, առանց շեղուելու: Բացի հին գրքերի և օրէնքների ուսումնասիրութիւնից՝ Կօնֆուցիոս այդ ժամանակները մեծ ջանասիրութեամբ աշխատում էր կատարելա-

գործուել այսպէս անուանեալ վեց ազատ արուեստների մէջ, առանց որոնց, չինաց կարծիքով, մարդս չէ կարող կրթուած համարուել: Այս վեց ազատ արուեստներն էին—երաժշտութիւն, հոգևոր ու քաղաքական ծէսեր, մաթեմատիկա, գեղագրութիւն, ամեն տեսակ զէնքերով մարտնչելու գիտութիւն և երկանիւ կառքեր կառավարելու վարժութիւն:

Սուգ պահելու ժամանակն անցնելուց չետոյ՝ Կօնֆուցիոս հին սովորութիւնների համաձայն՝ մօր գերեզմանի վրայ հանեց սգի հանդերձները և նորից վերադարձաւ զէպի հասարակական կեանքը: Նա չկամեցաւ կրկին իւր առաջուպէս պաշտօնն ստանձնել, այլ վճռեց շարունակել իւր գիտնական պարապմունքները, և միայն հինգ տարուայ քըրտնաջան աշխատութիւնից չետոյ՝ կարողացաւ կատարելապէս ըմբռնել այն վարդապետութեան հիմքերը, որի քարոզութեանը և տարածուելուն նուիրեց նա իւր կեանքի մնացեալ տարիները:

Շուտով նրա գիտնականութեան և իմաստութեան համբաւը տարածուեցաւ ամբողջ Չինաստանում, և ամեն կողմերից սկսեցին ժողովուել նրա մօտ գիտութեան և ճշմարտութեան ծարաւի մարդիկ, ամեն հասակի և կարողութեան—ծերեր և երիտասարդներ, հարուստներ և աղքատներ, ազնուականներ և ռամիկներ,—և Կօնֆուցիոս ոչ մէկին չէր մերժում, ամենքին էլ հաւասարապէս տա-

լիս էր իւր իմաստուն խորհուրդները: Մի քանի ջանէլ ու վառվռուն երիտասարդներ դարձան նրա աշակերտները և միշտ նրա մօտ էին գտնուում, իսկ ուրիշները նրա մօտ էին գալիս միայն հարկաւոր դէպքերում և չեւոյ դառնում էին իրանց գործին: Իէն իշխանութեան իշխանը լսելով իմաստուն փիլիսոփայի մասին՝ նրա մօտ ուղարկեց իւր մեծամեծներէից մէկին խորհուրդ հարցնելու, թէ ինչպէս պէտք է ամենալաւ կերպով կառավարել ժողովուրդը:

Այս լսելով՝ փիլիսոփան պատասխանեց.

— Զօհանայելով ոչ տիրոջը և ոչ հպատակներին՝ ես չեմ կարող խորհուրդ տալ, թէ ինչը կարող է օգտաւէտ լինել նորան և նրա ժողովրդին: Եթէ նա ինձ հարցնէր, թէ ինչպէս էին վարւում նախնի վեհապետները այս և այն դէպքում՝ ես ամենայն սիրով կկատարէի նրա ցանկութիւնը, որովհետեւ ես միայն ասում եմ այն՝ ինչ որ ինձ յայտնի է: Յայտնեցէք ձեր իշխանին իմ խօսքերը ճշտութեամբ:

Փիլիսոփայի պատասխանը անկասկած չաւանդեցաւ իշխանին, որովհետեւ հետեւեալ տարին Կօնփուցիոս իէն իշխանի պալատումն էր և այնտեղ չաջողութեամբ զբաղւում էր օրէնքների և բարքերի վերանորոգութեամբ: Վերջացնելով իւր գործը՝ նա պատրաստուեցաւ տուն վերադառնալու:

— Նա այստեղ գալով՝ կատարեցի պարտքս, ասաց նա. գնալով ևս նոյն պարտքս եմ կատար-

ւում: Այժմ ես կարող եմ օգտակար լինել մի ուրիշ տեղ ևս:

Իէն իշխանութիւնից նա ուղևորուեց դէպի Կին իշխանութիւնը, որտեղ ապրում էր նշանաւոր երաժիշտ Սիանգը: Այստեղ Կօնփուցիոս կամենում էր վերջնականապէս կատարելագործուել երաժշտութեան մէջ: Նրա կարծիքով՝ երաժշտութիւնը մարդու համար երկնային ամենաթանկագին պարգև է, որ բարձրացնում և ազնուացնում է նրա բնավորութիւնը, խաղաղացնում նրա հոգին վրդովուող կիրքը և տալիս նորան մաքուր ու անմեղ զուարճութիւն: Երաժշտութեան մէջ բոլորովին կատարելագործուելու համար՝ Կօնփուցիոս գործ դրեց շատ քիչ ժամանակ. նա մօտ քսան օրուայ մէջ կատարեալապէս ըմբռնեց նրան, որից կարելի է եզրակացնել, որ նրա ժամանակ երաժշտութեան պահանջներն այնքան էլ բարդ և ընդարձակ չէին: Յիրաւի իւր մի ասացուածքի մէջ Կօնփուցիոս երաժշտութիւն սովորելու մասին տալիս է մի շատ հասարակ խորհուրդ: Նա ասում է. «Երաժշտութիւն սովորելը շատ հեշտ է. ածելու սկզբում պէտք բոլոր լարերը լարուած լինին. ածելու ժամանակ ամեն բան պէտք է սահուն և պարզ լինի առանց աններդաշնակութեան, նոյնպէս պէտք է լինի և վերջում»:

Ինչեւիցէ, Կօնփուցիոս շատ էր գնահատում երաժշտութիւնը, իբրեւ ժողովրդի բարքերը մեղմացնելու միջոց: Նրա կանոնական գրքերից մէկի

մէջ ասուած է. «Աստուծոյ էք կրթուել. հիմնովին ուսումնասիրեցէք երաժշտութիւնը: Երաժշտութիւնը արտաբայում և գեղանկարում է մեզ համար երկինքը երկրի հետ միացնող կապը: Աստուծապաշտութեան և երաժշտութեան շնորհիւ կապերութեան մէջ անկարելի բան չէ կարող լինել»: Տարեգիրների ասելով՝ նա երաժշտութեան մասին մինչև անգամ մի գիրք է լօրինել, որը զժբախտաբար կորած է: Նոյն տարեգիրները լայնում են Կօնֆուցիոսի հետեւալ խօսքերը, որը նա ասել է, երբ որ վերջին անգամ եկել է Սիւնդի մօտ իւր սովորած մի երաժշտական պիեսի մասին հաշիւ տալու համար:

— Այժմ ես նման եմ աչն մարդուն, որը լեռան զաղաթից նայում է իւր անցած ճանապարհի և չրջակայքի վրայ: Երաժշտութեան մէջ ես տեսնում եմ աչն ամենը՝ ինչ որ նրա մէջ կարելի է տեսնել: Անընդհատ աշխատութեան շնորհիւ ես հասկացալ իմ շատ անգամ ածած հին երգի խորհրդաւոր միտքը: Նրան ածելով՝ ես վերազգացի աչն ամենը՝ ինչ որ զգացել է նրան լօրինողը. ինձ թուում էր, որ ես նրան տեսնում եմ, լսում, խօսում եմ նրա հետ: Երեւակաւում եմ, որ նրա հեղինակը եղել է միջնասակ մարդ, փոքր ինչ վշտահար դէմքով, մեծ-մեծ փաղաքշուն աչքերով, մեղմ ու դուրեկան ձայնով. մի խօսքով աչս երգի լօրինողի մէջ ես տեսնում եմ Վոլ-վաչն գ մեծ վարպետին: Գուշակեցի արդեօք:

Սիւնդ հաստատեց նրա կարծիքը և խօսքն բացազանչեց.

—Ն'ս պէտք է լինիմ ձեր աշակերտը, և ոչ դուք իմը:

ԳԼՈՒԽ Գ.

Վերադարձը և գիտնական պարապմունքների շաւտնակութիւնը.—Տաի իշխանութեան մէջ ճանապարհորդելը.—Հանդիպումն.—Ձէու իշխանութիւն գնալը.—Ձինաց ամենահին խմատոունների ասացուածքները և Կօնֆուցիոսի կարծիքը նրանց մասին.—Կօնֆուցիոսի տեսակցութիւնը Լաօ-Ձի'ի հետ:

Իէն և Կին իշխանութիւնների մէջ կատարած վերանորոգութիւններով Կօնֆուցիոս համոզուեցաւ, որ ճանապարհորդութիւնը ամենաօգտակար և անհրաժեշտ մի գործ է: Նա տեսաւ, որ միաչն այս կերպով կարելի է ձեռք բերել կատարեալ հասկացողութիւն և առողջ դատողութիւն ժողովրդի հոգեկան կարողութեան մասին, և թէ անմտութիւն է հիմնուել ալոյց կարծիքների վրայ, որոնք մեծաւ մասամբ դուրս են գալիս սուտ կամ կանխակալ: Վերադառնալով Լու իշխանութիւնը՝ Կօնֆուցիոս ձեռք զարկեց իւր գիտնական պարապ-

մունքներին, իրան ամբողջովին նուիրելով իմաստութեան և ճշմարտութեան: Նրա մտերիմներին մի քանիսն աշխատում էին լեռ կացնել նրան ալդ մտադրութիւնից և լորդորում էին նորից ծառայութեան մտնել:

— Իմ վճիռն անխախտ է, պատասխանեց Կօնֆուցիոս. — Իմ պարտքն է ծառայել և օգտակար լինել բոլոր մարդկանց առանց բացառութեան: Բոլոր մարդիկը կազմում են մի ընտանիք, իսկ ես կոչուած եմ նրանց դաստիարակելու:

Եւ չիրաւի, ալդ ժամանակուանից նրա տունը մի կատարեալ ձեմարան դարձաւ: Քիչ ժամանակից լեռնոյ Կօնֆուցիոս Լուից գնաց Տսի իշխանութիւնը, որտեղից հրաւիրել էր նրան ալդ գաւառի կառավարիչը: Սա ցանկանում էր օգտուել ալդէն հռչակուած փիլիսոփայի խորհուրդներին և փորձերին:

Կօնֆուցիոս ուղեորուեցաւ դէպի Տսի իւր աշակերտներին և բաղմաթիւ համակրողներին հետ, որոնք չէին կամենում նրանից բաժանուել:

Կօնֆուցիոս չմերժեց սրանց, հաստատ իմանալով, որ նրանցից բնաւորութեամբ թույլ և արեւորները ինքները լեռ կմնան:

Այս ճանապարհորդութեան ժամանակ նրանք մի անգամ տնքտնքոցի ձալն լսեցին ճանապարհի միւս կողմից: Մտնելով՝ նրանք տեսան, որ մի մարդ աշխատում է ինքն իրան կախել և իսկույն

խեղճին ազատեցին: Ալդ միջոցին Կօնֆուցիոս կառքից իջնելով՝ հարցրեց թշուառին նրա ինքնապահութեան դիմելու պատճառը:

Սա պատասխանեց, որ պատճառը իւր կեանքի թշուառ հանգամանքներն են, որ նա մանկութիւնից ձգտում էր իմաստուն լինել և ուսումնասիրեց ալն ամենը, ինչ որ կարողացաւ ճանապարհորդութեան սաստիկ սէր ունենալով՝ նա ձգեց հալընիքը և թափառեց, անցնելով մի իշխանութիւնից միւսը: Մի քանի տարուց լեռնոյ նա տուն վերադարձաւ և ամուսնացաւ, դրանից լեռնոյ շուտով նրա հալըն ու մալը մեռան, որոնց համար նա ոչինչ անել չկարողացաւ, և այս եղաւ նրա թշուառութեան առաջին պատճառը: Երկրորդ պատճառը կաշանում է նրանում, որ ճանապարհորդութիւնից վերադառնալով՝ նա ինքն իրան ժողովրդին առաջնորդելու ընդունակ էր համարում և այս նպատակով հէնց որ սգի ժամանակամիջոցը լրացաւ՝ նա դիմեց Տսի իշխանին, առաջարկելով նորան իւր ծառայութիւնը բալց իշխանը զբաղուած լինելով աւելի զուարճութիւններով, քան կառավարչական գործերով՝ չկամեցաւ նրան լսել: Բարեկամները նույնպէս դէպի նա վերաբերուեցան զոռոգութեամբ, անտարբերութեամբ, կամ ուղղակի ատելութեամբ, որը կազմում էր նրա թշուառութեան երրորդ պատճառը: Վերջապէս չորրորդ

պատճառը կաշանում էր նրանում, որ նրան թողել էր իւր միակ որդին:

— Այսպէս ուրեմն, — իւր խոստովանքը ամփոփեց ինքնասպանը. ես կամեցայ իմաստուն լինել, բայց չկարողացայ կատարել ամենասովորական քաղաքացիական պարտաւորութիւնս. ոչ բարի որդի եղայ, ոչ արժանաւոր քաղաքացի, ոչ լաւ հայր, դրա համար վճռեցի ինքս ինձ սպանել:

Կօնֆուցիոս լսելով ինքնասպանի խօսքը՝ ասաց.

— Ձեր սխալները որքան էլ որ մեծ լինին՝ աշխուամենայնիւ նրանք ոչինչ բաներ են, համեմատելով ձեր փոքրոգութեան հետ: Ամեն մի սխալ կարելի է ուղղել, բայց ինքնասպանութիւնը անուղղելի լանցանք է: Դուք կեանքի շաղի վրայ հէնց առաջին քայլերից մոլորուել էք և գնացել սխալ ճանապարհով, կարծելով թէ դէպի իմաստութիւն էք գնում: Դուք պէտք է աջնպէս անէիք, որ նախ քան իմաստուն դառնալը՝ մարդ դառնայիք. իմաստութեան հասնել կարելի է միայն ճշմարտապէս կատարելով այն բոլոր մարդկային պարտաւորութիւնները, որ դրել է մեզ վրայ նոյն իսկ բնութիւնը: Իսկ ձեր առաջին պարտաւորութիւնն էր սիրել ծնողներին և կատարել նրանց կամքը. բայց դուք այսպէս չարիք. — և հէնց այս անտարբերութիւնը դարձաւ ձեր բոլոր անբախտութիւնների պատճառը: Միայն մի կարծէք, որ ձեզ

համար ամեն ինչ կորած է անդառնալի կերպով. քաջակերուեցէք, մի վհատիք. հաւատացէք միայն մեծ ճշմարտութեան, որի անհերքելի գոյութիւնը հաստատուած է դարերի փորձով: Աշխատեցէք այդ ճշմարտութիւնը ամուր կերպով տպաւորել ձեր լիշողութեան մէջ. — մարդս քանի որ ապրում է՝ չպէտք է լուսահատուի ոչ մի բանում: Ամենամեծ թըշուառութիւնից նա կարող է անցնել ամենամեծ բախտաւորութեան, ամենասարսափելի տառապանքից — ամենակատարեալ բերկրութեան: Արիացէք, գնացէք տուն և սկսեցէք գործել աշխարհի եռանդով, որպէս թէ այսօր նորից սկսել էք ապրել՝ հասկանալով կեանքի իսկական արժէքը:

Ապա Կօնֆուցիոս դառնալով դէպի իւր աշակերտներն՝ ասաց.

— Այս, ինչ որ լսեցիք՝ ձեզ համար կարող է դաս համարուել... Թող ձեզանից իւրաքանչիւրը լաւ մտածէ սրա վրայ:

Այս ասելով՝ նա կառք նստեց, և ղեռ կէս վերստ չզնացած՝ աշակերտներից մի քանիսը մօտեցան նորան և թոյլտուութիւն խնդրեցին տուն վերադառնալու, որպէսզի ծառայեն իւրեանց ծնողներին և խնամեն նրանց:

Ինքնասպանի հետ ունեցած խօսակցութեան մէջ լատնուած սկզբունքը Կօնֆուցիոսի փիլիսոփայութեան հիմնական կանոնն է: Այս սկզբունքի վրայ է հիմնուած Չինաստանի բոլոր հասարակա-

կան, քաղաքական և ընտանեկան կեանքը: Որ-
դիական լարգանաց գաղափարի հետ սերտ կապ-
ուած է մեծերին լարգելու վարդապետութիւնը,
որի վրայ և կառուցուած է չինաց հասարակական
կեանքի կազմը:

Տալ երիտասարդ իշխանը Կօնփուցիոսին մեծ
պատուով ընդունեց, և միայն այսքան: Ոչ մի խոր-
հուրդ, ոչ մի խրատ չհարցրեց նրանից իշխանը,
որ ինքն իրան բոլորովին տուել էր զուարճու-
թիւններին և զանազան տեսակ հաճողական պա-
րապմունքներին: Կօնփուցիոս մի ամբողջ տարի մը-
նաց նրա պալատում, բայց իշխանութեան ոչ մի
օգուտ չբերաւ:

Իշխանը փառասիրութեան համար փիլիսո-
փային մեծ լարգանք և փաղաքշանք էր շուայլում,
որպէսզի ժողովուրդն ասէ, թէ տեսէք, տեսէք, մեր
իշխանը ինչպէս կարողանում է պատուել և պար-
գետարել մեծ մարդկանց: Նա Կօնփուցիոսին մի
քաղաք պարգևեց: Փիլիսոփան հրաժարուեցաւ, ա-
սելով որ ինքը արժանի չէ այդպիսի պարգևի:

Կօնփուցիոսի աշակերտների և ունկնդիրների
թիւն աճեց, որ իշխանը նրանց ժողով-
ուելու համար տուաւ իւր պալատներից մէկը:

Իշխանը լաճախ Կօնփուցիոսին իւր մօտ էր
հրաւիրում մտերմական խօսակցութեան համար:
Այսպիսի մի խօսակցութեան ժամանակ, փիլիսո-
փան զէպքի բերմամբ կարողացաւ ցոյց տալ իւր

խելքի անսովոր կորովը և չափնել իւր հպեացքը
կառավարիչների և կառավարութեան մասին: Տա-
րեղիւրները այս զէպքը հետեւեալ կերպով են պատ-
մում. մի անգամ փիլիսոփայի հետ մտերմական խօ-
սակցութեան ժամանակ՝ իշխանը տեղեկութիւն
ստացաւ Ձեռն իշխանութիւնից, թէ կայսերական
պալատի մէջ կաջակը այրել է տաճարներից միւնը,
որը նուիրուած էր նախնեաց չիշատակին:

— Լի-Վանգի տաճարը կլինի անշուշտ, նկա-
տեց Կօնփուցիոս:

— Ինչո՞ւ էք այդպէս կարծում:

— Քանի որ երկրի պետերը կենդանի են՝ լաւ
չհասկացուած լարգանքը կամ ստրկական երկիւղը
կապում է նրանց շրջապատողների բերանները.
բայց երկինքը անաչառ է. նա վաղ թէ ուշ իւր
զայրոյթը թափում է օրինազանցների վրայ: Լի-
Վանգ չար թագաւոր էր. նա փոխեց Վեն-Վանգի
բազմաթիւ իմաստուն կանոնները. նա առաջինն
էր, որ համարձակուեցաւ հագնել դեղին, չքեղ զար-
դարուած զգեստներ, կառուցանել հօլակապ պա-
լատներ և պճնազարդուել ձիերով ու կառքերով.
Նա առաջինն անգամ պալատի մէջ մտցրեց աչնպի-
սի անմիտ շուայլութիւն, որը կկարմրեցնէր նախ-
նի վեհապետներին: Երկնային զայրոյթը Լի-Վան-
գի չիշատակին նուիրած տաճարը կործանելով՝ ազ-
դարարում է մարդկանց, թէ նրանք պատիւներ էին
տալիս անարժաններին. բայց միննոյն ժամանակ

զգուշացնում է իշխաններին՝ ամենեւին չնմանել
Լիւ-Վանգին:

Իշխանը լատուկ ուղարկած մարդուց իմանա-
լով, որ արդարեւ կայծակն այրել է Լիւ-Վանգի տա-
ճարը՝ երկար մտածելուց լետով ասաց խօսակից-
ներին.

— Ուրախացէ՛ք ինձ հետ միասին: Կօնֆու-
ցիոսը մեզ համար մի անգնահատելի գանձ է: Նա
ամբողջ պետութեան ամենախիմաստուն մարդն է:
Նա հեռուում կատարուող բաները տեսնում է աչն-
պէս պարզ՝ որպէս իւր աչքի առաջ կատարուող-
ները:

Այս խօսակցութիւնից լետով Կօնֆուցիոս լար-
մար առիթ գտաւ Զէու իշխանութիւնն այցելելու:
Փիլիսոփայի հայրենիքում, իւր իշխանութեան մէջ,
մեռաւ իշխանական մեծ պաշտօնեաներից մինը,
որ իւր կենդանութեան ժամանակ լաճախ լսել էր
Կօնֆուցիոսի մասին և խիստ լարդում էր փիլիսո-
փային նրա իմաստութեան համար: Մահուան ան-
կողմում նա պատուիրեց իւր որդոց՝ Կօնֆուցիոսին
աշակերտել: Ազի եռամեալ շրջանն անցնելուց լե-
տոյ՝ ազնուազարմ երիտասարդները եկան Կօնֆու-
ցիոսի մօտ և դարձան նրա աշակերտները: Փիլի-
սոփայի ալս նոր աշակերտների ազնուական ծագ-
ման և հեղինակութեան շնորհիւ նրա դրութիւնը
բոլորովին փոխուեցաւ:

Կօնֆուցիոս ցանկանում էր այցելել կայսրու-

թեան մայրաքաղաքը, որպէսզի տեղնուտեղը ծա-
նոթանալ ընդունուած արարողութիւնների ու հան-
դէսների հետ: Նոր աշակերտներն իմանալով իրանց
ուսուցչի ալս ցանկութիւնը՝ շտապեցին օգնութեան
հասնել: Այդ ժամանակ կայսերական պալատը դը-
ռնուում էր իւր քաղաքում: Նոր աշակերտները
ձու իշխանին յայտնեցին, որ Կօնֆուցիոս ցանկա-
նում է թագաւորի պալատը տեսնել: Իշխանը փի-
լիսոփային խոստացաւ ամեն տեսակ օգնութիւն և
ի պատիւ նորան ուղարկեց իւր սեփական կառքը,
մի զոյգ ձի և իւր շքախմբից մի սպայ:

Կօնֆուցիոս գլխաւորապէս նպատակ ունե-
նալով ծանոթանալ Զէու թագաւորական տոհմի
ժէսերի և կարգերի հետ՝ այցելեց այնպիսի տեղեր,
որտեղ կարող էր հասնել իւր նպատակին: Իւր դա-
լով՝ նա հանդիպեց Չանգ-Յունգ երաժիշտ փիլիսո-
փային: Չանգ-Յունգ մեծ պատուով ընդունեց Կօն-
ֆուցիոսին և առաջարկեց նորան իւր տան մէջ
ապրել: Նա Կօնֆուցիոսին ներկայացրեց պալա-
տական առաջին նախարարին, որը սիրով ընդու-
նեց փիլիսոփային և սկսեց հարց ու փորձ անել
նրա վարդապետութեան մասին: Փիլիսոփան պա-
տասխանեց.

— Իմ քարոզածն այն վարդապետութիւնն է,
որին պարտական է հետևել ամեն մի մարդ. դա
Եսօ և Շուն վեհապետների վարդապետութիւնն է:
Իսկ ուսուցանելու եղանակը շատ պարզ է. ես մա-

տնացոյց եմ անում նախնեաց վարք ու բարքի վրալ, որպէս օրինակի վրալ, յորդորում եմ կարգալ սուրբ գիրքը (Կինդ) և պահանջում, որ մտածեն կարգացածի վրալ:

— Բայց ինչպէս պէտք է իմաստութիւն ձեռք բերել: Ինձ մի բան սովորեցրէք:

— Դուք ինձանից խիստ շատ էք պահանջում: Աշխատեցէք չմոռանալ հետեւեալ չորս առաջադրութիւնը. Պողպատը, որքան էլ ամուր է՝ բայց աչնուամենայնիւ կոտրւում է: Շատ անգամ անխորտակելի է համարւում աչն՝ ինչ որ իսկապէս հեշտ է ոչնչացնել: Հպարտը իրան ամենից բարձր դասելով՝ կարծում է, որ բոլորը իրան գլուխ են խոնարհում. իսկ ուրիշները նրան իրենցից ստոր համարելով՝ ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում նրա վրալ: Չափազանց ներողամիտը, ամենի հետ համաձայնուելով՝ խաղալիք է դառնում սեփական զիւրահաւատութեան: Այս կանոնները, որքան էլ պարզ երևան՝ կարող են հասցնել իմաստութեան ամենաբարձր աստիճանին աչն մարդուն, որը ըմբռնելով նրանց միտքը՝ նրանց համեմատ և կգործէ....

Առաջնակարգ մեծամեծներից մինը լսելով Կօնֆուցիոսի մայրաքաղաք գալը՝ սկսեց հարց ու փորձ անել նրա մասին Չանգ-խունգ երաժշտից:

Սա հրճուանօք խօսեց նրա մասին, ասելով որ նա մի աչնալի մարդ է, որի նմանը չկալ աշխարհումս. որ նա վերին աստիճանի համեստ լի-

նելով՝ չէ ամաչում իրանից աւելի պակաս գիտութիւն և իմաստութիւն ունեցողներից ուսանել. որ նա ամբողջ աշխարհի և բոլոր դարերի պարծանքը պիտի կազմէ. որ նա մարդու ամենակատարեալ տիպար է. և չետոյ աւելացրեց, որ նրա չիշատակը կմոռացուի միաչն աչն ժամանակ, երբ որ կանհետանալ Նաս'ի և Շուն'ի վարդապետութիւնը, և կմոռացուին պետութիւնը հիմնող իմաստուն վեհապետները խրատները:

Այս գովասանքի մասին յալտնեցին Կօնֆուցիոսին, որը լսելով ասաց.

— Այս բոլորը անտեղի ու չափազանց է. բաւական էր միաչն ասել, որ ես փոքր ինչ հատկանում եմ երաժշտութիւնից և աշխատում եմ պահպանել հին ծէսերը:

Մայրաքաղաքում մի անգամ զբօսանքի ժամանակ, պալատներն ու տաճարները նայելիս՝ Կօնֆուցիոս ի միջի ալլոց դիտեց և լուսոյ տաճարը (Մին-Տանգ): Այստեղ նա առանձին ուշադրութիւն դարձրեց հին վեհապետների պատկերների վրալ, որոնք դասաւորուած էին խիստ անկարգ կերպով և ամենեին չէին համապատասխանում ալլ վեհապետների արած գործերին: Խորը հառաչելով ասաց նա.

— Նաս և Շուն վեհապետների պատկերները տեղաւորուած են մի կարգում Կիէի և Շէուի պատկերների հետ: Մինչդեռ առաջինների և վերջին-

ների նմանութիւնը կախնում է միայն նրանում, որ ամենքն էլ կատար են եղել: Առաջինները սիրելի էին երկնքին և ժողովրդին, իսկ վերջինները ընդհակառակը ատելի էին երկնքին և սարսափ էին ազդում մարդկանց: Ինչու համար: Նրա համար, որ առաջինները չարգում էին երկինքը և կարողանում էին մարդկանց բախտաւորացնել, իսկ միւսներն ատում էին երկինքը և կարողացածներին չափ թշուառութիւն և տանջանք պատճառում մարդկանց:

Նախահայրերին նուիրուած տաճարներից մէկում նա նկատեց մի ոսկեայ արծան մարդու կերպարանքով, որի շրթունքների մէջ ցցուած էր երեք ասեղ: Արծանի մէջքի վրայ կար հետեւեալ արձանագրութիւնը.

«Էին ժամանակները մարդիկ աւելի զգուշ էին իրանց խօսակցութեան մէջ. պէտք է նորանց նմանել.... Շատ մի խօսիք, որովհետեւ շատախօսութեան ժամանակ միշտ կասուի մի բան՝ որն ամենեին չպէտք էր ասել.... Մի անգամից մի ձեռնարկէք բազմաթիւ գործերի—բազմաթիւ գործերը բերում են բազմաթիւ վշտեր, կամ գոնէ հոգսեր... Աշխատեցէք և գործեցէք՝ որքան պահանջում է ձեր պարտականութիւնը.... Մի որոնէք ոչ մեծ ուրախութիւն, ոչ աւելորդ հանգստութիւն. թէ առաջինի և թէ երկրորդի ետեից ընկնելն արդէն չարչարանք է և խոչընդոտ հանգստութեան... Եր-

բէք մի անէք այն բանը, որից վաղ թէ ուշ պէտք է փոշմանէք.... Ամեն կերպ աշխատեցէք թէկուզ փոքր ինչ շտկել չարիքը. աչքաթող արած փոքրիկ չարիքը կաճի և կմեծանալ... Եթէ ժամանակին չխուսափէք ուրիշների կողմից ձեզ արած փոքրիկ անարդարութիւնից՝ շուտով պէտք է գործ դրնէք բոլոր ոլորերը, որպէսզի դէմ դնէք սարսափելի չարձակմունքների.... Միայնակ խօսելիս կամ գործելիս՝ մի երեակայէք, որ ձեզ ոչ ոք չէ տեսնում և չէ լսում. հոգիները վկայ են ձեր բոլոր գործերին.... Երկար ժամանակ ծածկուած կրակը կբռնկի և կդառնայ անկաղթելի հրդեհ. իսկ նոր երեսացող կրակը հեշտ է հանգցնում.... Շատ վտակները կազմում են գետ. շատ թելեր հիւսուած միասին կազմում են աջնալիսի թուկ, որը դժուար է կտրել... Զահէլ, դեռևս արմատ չբռնած ծառը գետինից հեշտ է հանում. թողէք նա աճի,—և կհարկաւորուի կացին... Մեր բերաններից կարող են ելնել թունաւոր նետեր և աւերիչ բոցեր. զգուշութիւնը պահպանում է մեզ թէ՛ նետերից և թէ՛ կրակից... Մի կարծէք, որ ուժեղ մարդը միշտ կարող է իրան ենթարկել ամեն տեսակ վտանգների. ուժեղը միշտ կարող է պատահել աւելի ուժեղին, որը նրան կչաղթի... Օրինաւոր իշխանաւորին ատել՝ նշանակում է նմանել աւազակների.... տըրտնջալ արդար կառավարութեան դէմ՝ նշանակում է ստորանալ և նմանել տգէտ ամբոխին....

Թագաւորին ընդդիմանալ կարելի է միայն նրա չափազանց պահանջների ժամանակ. քչով բաւակա- նացողին հեշտ է հնազանդուել: Հասարակ մարդիկ և մարդկանցից ամենահասարակը երբէք չեն սկսում և չեն ձեռնարկում ոչ մի նոր բանի. նրանք միայն նմանում են և հետևում այն բանին՝ ինչ որ անում են ուրիշները. նորանց անհրաժեշտ են օրինակներ և տիպարներ. տեսնելով զգուշ, պատուա- ւոր, բարեգործ և բարեկիրթ մարդկանց՝ նրանք ևս իրանց կարգին աջակէս են դառնում և ծառայում իբրև օրինակ յաջորդ սերունդներին:—Իմ չրթունքները փակուած են, չեմ կարող խօսել. հարցերին և հակաճառութիւններին չեմ պատասխա- նի. հարցնելու բան ևս չունիմ: Գիտութիւնը ծած- կուած է, բայց և աջակէս ձիշտ է: Թէև իմ դրու- թիւնը բարձր է, բայց ոչ ոք չէ կարող ինձ վեա- սել: Ձեզանից ո՞վ կարող է այս ասել: Երկիրքը ազգականութիւն չունի. նա միակերպ է ամեն մար- դու համար: Այստեղ ինչ որ կարդացիք. արժանի է խորին մտածողութեան»....

Այս արձանագրութիւնը ամբողջովին կազ- մուած էր չինաց նախնի իմաստունների ասաց- ուածքներից և իւր մէջ պարունակում էր այն ժա- մանակուայ ժողովրդի մէջ տիրող բարձրագոյն գա- ղափարները:

Կօնֆուցիոս բարձրաձայն կարդալով այս հրա- հանգները՝ ասաց շրջապատողներին.

—Նա այս հրահանգները, այս կանոններն ըն- դունում եմ իբրև հիմք այն ամեն օգտակար բանի, ինչ որ միայն կարելի է ասել. ես համոզուած եմ, որ այս կանոնները գործին չարմարեցնելով կարե- լի է մօտենալ ճշմարտութեան: Կաշխատեմ օգ- տուել նրանցից. ձեզ ևս խորհուրդ եմ տալիս նոյնն անել:

Կօնֆուցիոս լուսոյ տաճարից դնաց ուրիշ տաճարներ, որտեղ բողոքիսանները չարգանք էին մատուցանում իրանց նախնիքներին. այս հան- գատարաններին վերահսկող մանդարինները նրան մեծ պատուով ընդունեցին և բազմեցրին բարձր ամբիոնի վերայ: Խօսակցութեան ժամանակ Կօն- ֆուցիոս ամենքին զարմացրեց իւր գիտնականու- թիւնով և ամեն բանի տեղեակ լինելով՝ Բայց և աջակէս նա ալստեղ ևս դէպք չէր բաց թողնում մօտիկ ծանօթանալու ընդունուած ծէսերի և սովո- բութիւնների հետ, որպէսզի իմանայ թէ որքան էին շեղուած հին օրէնադրութիւններից. նա աջ- պէս մանրամասնաբար հարց ու փորձ էր անում և աջակէս մանրակրկիտ էր, որ ներկայ եղողներից մինը նկատեց.

—Այս ի՞նչ է. ասում էին, որ նա ամեն բան գիտէ, այն ինչ նա ամեն բանի մասին հարց ու փորձ է անում....

Կօնֆուցիոս այս մասին լսելով՝ ասաց.

—Մէսերն էլ հէնց դրա մէջ են կալանուած:

Ինչպէս վերջը կտեսնենք՝ Կօնֆուցիոս մեծ նշանակութիւն էր տալիս ծէսերին։ Մանօթանալով և ուշադրութեամբ ուսումնասիրելով մայրաքաղաքի ծէսերն ու սովորութիւնները՝ Կօնֆուցիոս բացի դրանից պարապեց նաև երաժշտութիւնով։

Այսպէս նա Զէու իշխանութեան մէջ ապրեց երկու տարի։ Այս միջոցին նա տեսնուեցաւ Լաօ-Ջի'ի հետ, որն ապրում էր քաղաքից դուրս մի աշրի մէջ։ Լաօ խօսելով Կօնֆուցիոսի հետ, իբրև մի մարդու, որ հաւատարիմ էր իւր վարդապետութեան՝ պախարակում էր Կօնֆուցիոսին նրա հռչակի, բաղմամբիւ աշակերտների և փառասիրութեան համար, և վերջացնելով խօսքերը՝ Լաօ յայտնեց նորան իւր կարծիքը այն մասին, թէ ինչպէս պէտք է լինի իմաստունը։

— Իմաստունը, ասաց Լաօ, խուսափում է լուսից, նա ոչ միայն հետամուտ չէ լինում, այլ և փախչում է պատիւներից, ճշմարիտ իմաստունը կատարելապէս հաւատալով, որ իւր մահուանից չետոյ կթողնէ օգտակար կանոններ նրանց համար, որոնք ընդունակ են լինելու և իւրացնելու այդ կանոնները, ճշմարիտ իմաստունը հաւատարմութիւն չէ տալիս իւրաքանչիւր պատահողին, նա յարմարում է ժամանակի և հանգամանքների հետ։ Լաւ ժամանակները նա խօսում է, իսկ ծանր և դժուարին ժամանակները լռութիւն պահպանում։ Պանծ ունեցողը ծածկում է իւր զանձը ամենից և չէ տա-

րածում, որ ինքը զանձ ունի։ Ճշմարիտ առաքինի մարդը ի ցոյց չէ դնում իւր առաքինութիւնը և ամենքի ականջն ի վեր չէ կանչում, որ ինքը իմաստուն և առաքինի է.... Ահա թէ ինչ էի ուզում ձեզ ասել։ Օգտուեցէք նրանից, ինչ որ լսեցիք ինձանից։

Կօնֆուցիոս վերադառնալով Լաօ'ի մօտից՝ երկար ժամանակ լռեց և չետոյ դառնալով դէպի իւր աշակերտներն՝ ասաց.

— Նրեակալեցէք մի վիշապ (դրակօն), որ իւր ահագին մէջքի օղակներով փաթաթուել է ամբողջ տիեզերքին.... Այսպէս է Լաօ-ձի'ի խելքը.....

ԳԼՈՒԽ Դ.

Տաի և լետոյ Լու վերադառնալը—Աշակերտների հետ ունեցած խօսակցութիւնը—Սուրբ գրքերի ուղղելը—Կօնփուցիոս սկսում է իւր պատմական «Զուն-ցիւ» գրութեանը և այլ աշխատութիւնները:

Զէու իշխանութեան մէջ երկու տարի մնալուց լետոյ, Կօնփուցիոս ամեն ինչ տեսնելով և ուսումնասիրելով՝ վճռեց վերադառնալ Տաի իշխանութիւնը: Պատմում են, որ նա վերադառնալուց մի քանի ժամանակ լետոյ, երբ պալատ գնաց իշխանի հետ տեսնուելու համար՝ այս վերջինի մօտ նուազահանդէս կար, որի ժամանակ նուազում էր Շուն բողղիխանի երաժշտական աշխատութիւնը՝ հեղինակուած Քրիստոսից 1730 տարի առաջ: Այս աշխատութիւնը կոչւում էր Շաօ-իօ, կամ երաժշտութիւն՝ որը ցրում էր մարդկանց մռայլ մտքերը և սրտերը գրաւում զէպի սէրն ու պարտականութիւնը: Այս երաժշտութիւնը փիլիսոփայի վրայ աջակիցութիւն ունեւորութիւն թողեց, որ նա երեք ամսուայ ընթացքում ուրիշ ոչ մի բանի վրայ

չէր կարողանում մտածել. ամենահամեղ կերակուրները նրա համար կորցրել էին իրանց գրաւչութիւնը: Այս անգամ Կօնփուցիոս Տաի իշխանութեան մէջ երկար չմնաց: Տեսնելով որ երկտասարդ իշխանը չափազանց թեթեամիտ լինելով, չպիտի կարողանայ հասկանալ և իւրացնել իւր վարդապետութիւնը՝ փիլիսոփայի վերադարձաւ Լու իշխանութիւնը, իւր հայրենիքը: Այստեղ Կօնփուցիոս ապրեց 15 տարի, վարելով մի բոլորովին աննշան պաշտօն: Աշակերտները նորան խորհուրդ էին տալիս հրաժարուել աղպիսի աննշան պաշտօնից:

—Երբեք, պատասխանեց Կօնփուցիոս. իմ մերժումը գոռոզութեան տեղ կընդունուի: Մենք, որ ուրիշներին ցոյց ենք տալիս առաքինութեան ճանապարհը՝ առաջինը ինքներս պիտի գնանք նրանով. միայն այսպիսով մենք կ'ունենանք հետեողներ:

Լու իշխանութեան մէջ Կօնփուցիոս իրան նուիրեց իւր վարդապետութիւնը տարածելուն: Նա ուսուցանում էր խօսքով և գործով, օգտուելով ամեն զէպից: Այս խօսակցութիւններից մենք կը բերինք ամենահետաքրքիրները:

Մի անգամ աշակերտները տեսան, թէ ինչպէս Կօնփուցիոս ուշադրութեամբ նայում էր գետի ընթացքի վրայ:

—Վարժապետ, ասաց նրանցից մինը, միթէ

գետի հոսանքը դիտելն ևս օգտակար է... Դա խօսման շատ սովորական բան է:

— Ճիշտ է ձեր ասածը, պատասխանեց Կօնֆուցիոս. գետի հոսանքը, բնական, կամ արհեստական, ձեռքով փորուած տաշտով՝ մի շատ սովորական և ամենքին յայտնի բան է... Բայց մի բան ևս կայ, որը ոչ ոք չէ իմանում և որ աչնքան էլ սովորական չէ, այն է գետի համեմատութիւնը որեւէ վարդապետութեան հետ: Հէնց այս համեմատութիւնն է ինձ զբաղեցնում... Ջրերը հոսում են գիշեր ցերեկ առանց կանգ առնելու, հոսում են մինչև գետաբերանը և աչնտեղից թափւում ծովը: Եւսօ՛րի և Շուն՛ի վարդապետութիւնն էլ միեւնոյն կերպ հոսում էր մինչև մեր օրերը. մենք ևս մեր կարգին, իբրև կենդանի ալիքներ՝ առաջ կտանենք նրան և կտանք յաջորդ սերնդին, և աչսպէս մինչև աշխարհիս վերջը: Չպէտք է նմանել այն միաշնակեաց իմաստուններին, որոնք իմաստուն են միայն իրանց համար, որովհետև ուրիշներին մասնակից չեն անում իրանց իմաստութեան:

Սրանով Կօնֆուցիոս յայտնեց իւր հափացքը իւր վարդապետութեան մասին և միևնոյն ժամանակ, թէ և ուշ, պատասխանեց Լաօ-Ջի՛ին այն մասին, թէ ինչպէս պիտի լինի իմաստունը:

Ահաւասիկ մի դէպք ևս, որտեղ Կօնֆուցիոս յայտնեց իւր կարծիքը կառավարութեան և չափաւորութեան մասին, չափաւորութեան, որ կազ-

մում էր նրա գլխաւոր բարոյական սկզբունքներից մինը. ամեն բանի մէջ միջին ճանապարհ բռնելու և ծաղրալեղութիւններից խուսափելու օրինակը յայտնուեցաւ նորան բողոքիսանի պալատում: Դահլիճի մէջ գահի մօտ դրած էր մի ծղնօտից հիւսած և լաւ ձիւթած՝ հորից ջուր հանելու դոլ: Փլիսովան հարցրեց ներկայ եղող մանդարիններից մէկին.

— Այս դոլը ինչո՞ւ համար է աչստեղ դրած:

Մանդարինը ինչ ասելիքը չիմացաւ, և մի անմիտ խօսք արտասանեց: Այն ժամանակ Կօնֆուցիոս խնդրեց միւսին ջրհորից ջուր հանել: Սա զգուշութեամբ և հանդարտօրէն դոլը հորի մէջ ձգեց, բայց թեթեւ դոլը լողաց ջրի երեսին, և մանդարինը մի կաթիլ ջուր անգամ չկարողացաւ հանել: Այնու ամենայնիւ Կօնֆուցիոս խնդրեց ջուր հանել:

— Եթէ այս կերպ չկարողացանք՝ ասաց նա, պէտք է աշխատել ուրիշ որեւէ կերպով անպատճառ ջուր ձեռք բերել:

Միւս մանդարինը վերցրեց դոլը և բոլոր ուժով ձգեց հորի մէջ. դոլը ջրով լցուեց և խորասուզուեց:

— Այս էլ լաւ չէ, ասաց Կօնֆուցիոս. ինչպէս երևում է՝ պէտք է ես հանեմ ջուրը...

Նա վերցնելով դոլը՝ հանդարտօրէն ձգեց ջրի մէջ, ոչ շատ արագ և ոչ խիստ կամաց, և դոլը

լցուեցաւ անքան, որ առանց դժուարութեան կարելի էր դուրս քաշել հորից: Այն ժամանակ Կօնֆուցիոս դառնալով դէպի իւր շրջապատողներն՝ ասաց.

— Ահա ձեզ լաւ կառավարութեան ամենաճիշտ պատկերը: Վնասակար են ինչպէս չափազանց թուութիւնը, նոյնպէս չափազանց խստութիւնը. պէտք է գիտենալ միացնել ոյժն ու չափաւորութիւնը միմեանց հետ: Հին ժամանակները այս փորձը գործադրուում էր նոր վեհապետի գահակալութեան ժամանակ. — հին օրէնսդիրները կարգադրել էին դատարկ դռլը միշտ գահի մօտ պահել, որպէսզի վեհապետները միշտ լիչեն այդ ֆիզիքական երևոյթի բարոյական իմաստը...

Վեռ հայրենիքում եղած միջոցին, Կօնֆուցիոս մի անգամ իւր աշակերտների հետ քաղաքի շուրջը պտտելու ժամանակ՝ մի թռչնորս տեսաւ, որ ջանասիրութեամբ պարապում էր գործով: Վանդակի մէջ նայելով՝ Կօնֆուցիոս նկատեց, որ նրա մէջ գտնուում են միայն ջահէլ թռչուններ:

— Հապա ուր են մեծերը, հարցրեց նա թռչնորսին:

— Մեծերը խորամանկ և կասկածոտ են, պատասխանեց թռչնորսը: Նախ քան ցանցի վրայ դրած հրապուրիչ կերին մօտենալը՝ նրանք սկզբում ամեն կողմ քննում ու զննում են, և երբ մի որեւէ վտանգաւոր բան են նկատում՝ ան ժամա-

նակ ոչ միայն իրանք չեն մօտենում, այլև իրանց հետ հեռացնում են նաև փոքրերին: Առհասարակ ցանցի մէջ մեծաւ մասամբ բռնուում են մեծերից բաժանուած ջահէլ թռչունները և միայն պատահմամբ ջահէլներին օրինակին հետևող ծերերը:

— Լսեցիք, ասաց փիլիսոփան՝ դառնալով դէպի իւր աշակերտները: Թռչնորսի խօսքերը մեզ համար խրատական են: Նս կբաւականանամ մի քանի բացատրութիւններով: Ջահէլ թռչունները խուսափում են ցանցից՝ երբ որ թռչում են մեծերի հետ. բաց մեծերը բռնուում են՝ երբոր հետևում են ջահէլներին: Արդեօք այս միեւնոյնը չէ՞ պատահում և մարդկանց հետ: Մեծամտութիւն, կռուասիրութիւն, անփորձութիւն, անշրջանկատ բնավորութիւն — ահա ջահէլների սխալմանց գլխաւոր աղբիւրները: Նրանց չնչին առաւելութիւններով փռքուած, քչից շատից գիտութեան հոտն առած՝ ջահէլները իրանց ամենագէտ են համարում: Կատարելով մի թէկուզ ամենասովորական գործ՝ նրանք իրանք իրանց իմաստութեան և առաքինութեան հերոսներ են համարում: Նորանց անծանօթ է կասկածն ու անվճռականութիւնը, նորանց առաջնորդում է ոչ թէ փորձուած իմաստուն մարդկանց խորհուրդը, այլ կոյր և անմիտ հրապուրը: Նրանք առաջ են գնում սխալ ճանապարհով, մոլորւում են և ընկնում որոգայթի մէջ... Նմանապէս միթէ ծեր կամ չափաճատ մարդկանց մէջ չեն պատահում

աջնապիսիները, որոնք չլանալով ջահէլներն ամենա-
աննշան ընդունակութիւններն՝ բոլորովին հաւա-
տում և հպատակում են նորանց, նրանք մտածում
և խօսում են ջահէլների պէս և նրանց հետ միա-
սին էլ մոլորում: Երբէք չմոռանաք այն, ինչ որ
լսեցիք:

Կօնֆուցիոսի ուսուցման եղանակի մասին
այսքանը բաւական համարելով՝ շարունակենք նրա
կեանքի նկարագրութիւնը:

Լու իշխանութեան մէջ ապրելու միջոցին՝
Կօնֆուցիոս չղաղարեցրեց իւր գիտնական պա-
րապմունքները: Նա զարթում էր շատ վաղ և
պառկում ուշ. օրուայ մէջ հանգստութեան նուր-
բում էր միայն երկու ժամ:

Այդ ժամանակ Կօնֆուցիոս պարապում էր
հին սուրբ գրքերի քննութեամբ և նորից խմբա-
գրելով. ուղղում, պարզաբանում և կրճատում էր
շատ աջնապիսի գրքեր, որոնք չէին համապատաս-
խանում ժամանակի ոգուն կամ տիրապետող հաս-
կացողութիւններին: Մանաւանդ մեծ փոփոխու-
թիւններ մտցրեց Շու-ձին անունով հին գրութե-
ան մէջ, որը պարունակում էր չինաց հին պատ-
մութիւնը, սկսեալ 2365 թ. Քր. ա.: Կօնֆուցիոս
կամենում էր այս գիրքը օրէնսդրութեան հիմք
դարձնել և հէնց դրա համար էլ դուրս ձգեց նրա
միջից այն ամենը, ինչ որ հակառակ էր առողջ
դատողութեան, և կրճատելով նրան՝ տարեթիւր

սկսեց Նաօ վեհապետից: Այդ ժամանակ նա սկսեց
գրել նաև իւր պատմական աշխատութիւնը «Պա-
րուն և Աշուն» (Չուն-Յիւ): Նրա գործն է նաև
Լու իշխանութեան պատմութիւնը: Կօնֆուցիոս
անուշադիր չթողեց նաև Շի-Յին կոչուած ոտանա-
ւոր գրութեան, որը հեղինակուած էր 1700 թ.
Քր. ա.: Սրա մէջ եղած 3000 տներէն թողեց մի-
այն 311-ը, որոնք և ծառայեցրեց իբրև հիմք
իւր վարդապետութեան: Կօնֆուցիոսին են վերա-
գրում նաև «Փի-Յին» անունով գուշակութեան գիր-
քը, (մեր «Էֆէմէրտէի» ապուպապը), որը գրուած է
մութ և անտանելի լեզուով. նմանապէս, ինչպէս
ասացինք, երաժշտութեան մասին գրուածքը:

ԳԼՈՒԽ Ե.

Կօնֆուցիոս դարձեալ ճանապարհորդում է:—Կօնֆուցիոսի հաշեացքը որսորդութեան մասին —Կօնֆուցիոսի կորովամտութիւնն ու մեծահոգութիւնը—Աշակերտներին հետ ունեցած խօսակցութիւնը հայրենիքը թշուառութիւնից ազատելու մասին:

Այս միջոցին Լու իշխանութեան մէջ խռովութիւնները շարունակւում էին: Այս խռովութիւնների աղետալի տեսարանները բոլորովին ձանձրացրել էին Կօնֆուցիոսին: Մասամբ վիշտը փարատելու, մասամբ էլ իւր քարոզութիւնների արդիւնքը տեսնելու համար, նա վճռեց կրկին ճանապարհորդել: Նա ալլ և ալլ իշխանութիւնների պատելով և ոչ մի միսիթարական բան չգտնելով՝ դարձեալ գնաց Տսի իշխանութիւնը, որի իշխանը փոխելով իւր առաջուան թեթևալիկ և զուարճասէր բնավորութիւնը՝ դարձել էր բարեբարոյ, խոհեմ և ընդունակ գնահատելու Կօնֆուցիոսի արժանավորութիւնները և օգտուելու նրա խորհուրդներից: Արդարև, երբ Կօնֆուցիոս նրա հետ տես-

նուելու իրաւունք խնդրեց՝ իշխանը փառաւոր ընդունելութիւն ցուց տուեց փիլիսոփային:

Շրջապատուած փալլուն շքախմբով՝ իշխանը հանդիպեց նորան պալատի մուտքի առաջ ասելով.

—Նս իմացալ, որ դուք ձեր փառաւոր հայրենիքից եկել էք ինձ տեսնելու և օգտակար լինելու ինձ և իմ ժողովրդին: Յախնում եմ ձեզ իմ խորին շնորհակալութիւնը ալլ մտադրութեան համար. ես ուրախ եմ՝ ձեզ իմ մօտ տեսնելով: Դէհ, մտէք, չարգելի ուսուցիչ, և թոյլ տուէք ինձ լսել ձեզանից իմաստութեան մի քանի դասեր....

Նւ ճանապարհ տալով՝ իշխանը խնդրեց Կօնֆուցիոսին մտնել պալատը: Նրբ Կօնֆուցիոս հրաժարուեց իշխանի առջևից գնալ՝ վերջինս նկատեց, որ դրանով նա ամենեին չէ ստորացնում իւր իշխանական արժանապատուութիւնը և որ իւր կարծիքով իմաստունը մեծ է իշխանից: Կօնֆուցիոս դրա համար պատասխանեց.

—Տէր իմ, քաղաքավարական կանոններն սմեն մարդու համար գոյութիւն ունին, ինչպէս թագաւորների, նոյնպէս և հասարակ մահկանացուների համար: Նթէ դուք անփութութեամբ վերաբերուէք դէպի ձեր պարտականութիւնները, իսկ ես դէպի իմ՝ մենք երկուսս էլ կշփոթենք հաստատուած կարգը: Որտեղ էլ որ լինիք՝ ձեզ պէտք է չարքանք մատուցանել ամենուրեք. այս ձեր բարձր աստիճանի առաւելութիւններից մէկն է.... իշխա-

նը պէտք է իշխան լինի, նախարարը՝ նախարար և հայրը՝ հայր:

Իշխանն այլ ևս չպնդեց: Ընդհանրապէս իշխանի այս ընդունելութիւնը ե նրա տածած խորին չարգանքը դէպի իմաստունը յոյս էին տալիս, որ վերջապէս Տսի իշխանութեան մէջ փիլիսոփայի գործունէութեան համար մեծ ասպարէզ կբացուի: Արդարեւ իշխանը խոստացաւ Կօնֆուցիոսին նախարարութեան պաշտօն տալ: Բայց փիլիսոփան հասկացաւ, թէ որքան քիչ յոյս պէտք էր դնել այդ խոստմունքների վրայ: Նախարարները վախենալով Կօնֆուցիոսի ազդեցութիւնից՝ կարողացան համոզել իշխանին լետ կենալ իւր մտադրութիւնից, մատնացոյց անելով գլխաւորապէս այն բանի վրայ, որ թէև Կօնֆուցիոս կարող է և շատ իմաստուն լինել թէօրիայի մէջ, բայց միևնույն ժամանակ կարող է պատահել, որ նա լինի իւր թէօրիալիքական նախագծերի ամենաչնորհ գործադրողը—երբ որ քանը գործի կհասնի: Այս ենթադրութիւններից վախենալով փոքրոգի իշխանը՝ լետ կացաւ իւր մտադրութիւնից ասելով. «Յս նրա խրատներից օգտուելու համար շատ ծեր եմ»: Կօնֆուցիոս ամենեւին չգանգատուեց իշխանի փոփոխամտութեան վրայ, այլ միայն խղճաց նորան, որպէս բարեմիտ կառավարչի՝ որը չէ կարողանում բարիք անել շնորհիւ իւր մեծամեծների ազդեցութեան: Այստեղից նա ուղևորուեց կրկին դէպի հայրենիք: Ճա-

նապարհին համարեա ամեն տեղ առանձին անհատներ նորան խորին յարգանք էին ցոյց տալիս. իսկ հասարակ ամբոխը, որ ամբողջապէս խորասուզուած էր իւր աւօրեայ հոգսերի մէջ՝ դէպի նրան վերաբերում էր խիստ սառնասրտութեամբ և երբեմն մինչև անգամ ատելութեամբ: Ճանապարհին ի միջի այլոց մի դէպք առիթ տուաւ Կօնֆուցիոսին պատերազմի մասին խօսելու. նա տեսաւ, որ մի քանի երկրագործներ նետ արձակելով և այլ զինուորական վարժութիւններով են զբաղուած: Կօնֆուցիոս ասաց նորանց.

—Նախնի իմաստուն թագաւորների ժամանակ այսպիսի գործերով միայն զինուորներն էին պարապում և ոչ երկրագործները: Իսկ այժմ կարծես թէ ամենքն էլ ուզում են զինուոր դառնալ: Ի հարկէ, դրանից պատերազմն առաջուանից աւելի լաւ էի լինի, բայց դրա փոխարէն դաշտերի մշակութիւնը աւելի կվատանայ: Բայց և այնպէս, աւելացրեց նա, զինուորներ պէտք են. դա մի չարիք է, որ օրէցօր աւելի և աւելի անհրաժեշտ է դառնում:

Յետոյ նա պատահեց մի խումբ որսորդների, որոնք որսի էին գնում: Հին ժամանակները Զինատանի մէջ կալին ահագին քանակութեամբ երէներ և գիշակեր գաղաններ: Այս վերջիները այն աստիճան բաղմամբիւ և վտանգաւոր էին, որ չինաց առաջին կալսրները սահմանեցին հատարա-

կալան պարտադիր որսորդութիւններ տարեկան մէկ կամ երկու անգամ: Այս որսորդութեան հետ կապ ունէին նաև մի քանի կրօնական ծէսեր:

Կօնֆուցիոսի աշակերտներին մէկը տեսնելով՝ որսորդներին՝ հարցրեց նրան.

—Որսորդութեան նման մի պարապմունք արդեօք արժանի է իմաստունի ուշադրութեան:

—Ամեն ինչ արժանի է իմաստունի ուշադրութեան, և չկայ մի բան, որով իմաստունը չկարողանայ կամ չկամենայ զբաղուել: Որսորդութիւնը մարդուս առաջին պարապմունքներից մէկն է. որսորդութեան շնորհիւ մարդուս լաջողուել է տիրապետել աֆն հողերին, որն այժմ մշակում է և որն սկզբում լիքն է եղել գազաններով: Հին ժամանակները նշանաւոր վեհապետներ զբաղում էին որսորդութեամբ, կառավարչական ծանր հոգսերից փոքր ինչ հանգստանալու համար: Վերջապէս որսորդութեան շնորհիւ մարդիկ կարող են օգտուել աֆն թանկագին առաւելութիւնով, որը ներկայացնում է սեփական ձեռքով սպանած կենդանիներին զոհելը, ինչպէս որ սահմանուած է ծէսերի մէջ:

Կօնֆուցիոսի այս խօսակցութեան ժամանակ, որսորդները մօտեցան նորան: Փիլիսոփան խնդրեց իրան ևս ընդունել խմբի մէջ, և համաձայնութիւն առնելով՝ նրանց հետ միասին գնաց որսորդութեան, որով զբաղուեց երկու շաբաթ: Սրանից չտող վերադարձաւ լու իշխանութիւնը, ուր նորան

սպասում էին մեծ անհամբերութեամբ: Ընդհանուր շփոթութիւններին միացել էր մի նոր թշուառութիւն. տարին անյաջող էր, կենտական պիտոյքների գները բարձրացել էին, ժողովուրդը միջոց չունէր կանոնաւոր կերպով հարկ վճարելու տէրութեան գանձարանին: Ահա այսպիսի դժբախտ հանգամանքներում կրկին լիչեցին Կօնֆուցիոսին, որովհետև լայսնի էր, թէ նրա հողային վերակացութեան ժամանակ ինչպէս լաջող հունձ էր ստացում մինչև անգամ անբերրի հողերից: Առաջին նախարարը Կօնֆուցիոսի գալու լուրն առնելուն պէս՝ նրան պալատ հրաւիրեց խորհրդակցելու համար: Նախարարը խնդրեց իրան խորհուրդ տալ, թէ ինչ պէտք էր անել այսպիսի հանգամանքներում: Կօնֆուցիոս նրա հարցերին պատասխանեց խիստ անորոշ և մութ կերպով: Նրա աշակերտները սաստիկ զարմացան իրանց ուսուցչի այս արարքի վրայ:

—Գուք որ աֆնքան վեհանձն և բարի էք, ինչո՞ւ չցանկացաք նախարարին մասնակից անել ձեր փորձառութեան և գիտնական տեղեկութիւններին: Միթէ դուք արդէն պաղել էք բարի գործերից: Կարելի է մարդկանց անգոհունակութիւնը խտտացել է ձեր սիրտը: Մենք չենք կարողանում հասկանալ, թէ ինչ է պատահել ձեզ հետ:

—Շնորհակալ եմ ձեր անկեղծութեան համար, պատասխանեց Կօնֆուցիոս. ևս ձեզ կպատասխանեմ նույնպէս անկեղծութեամբ: Ես այդպէս

արի՝ որովհետեւ նախարարը ազա՛ն մարդ է, հա-
րուստ հողատէր: Նա մտածում է ոչ թէ հասարա-
կութեան շահի մասին, այլ միայն իւր կալուած-
ների եկամուտն աւելացնելու մասին: Նա հարկ է
ժողովում կենսական միջերջներից, և նրա գլխաւոր
հոգսն է մեծացնել հարկը... Մի կարծէք, որ նա
ժողովրդի դժբախտութեան վրայ խղճալով՝ աշխա-
տում է թեթեացնել նրա հոգսերը. ընդհակառակը,
նա աշխատում է խլել ժողովրդի վերջին ունե-
ցածը: Հասկանալով նրա դադանի մտադրութիւնը՝
ես պատասխանեցի անհաստատ և անփութ կերպով:
Ոչ թէ ժողովրդի, այլ իւր սեփական օգտի համար
էր նա աշխատում ինձանից լիմանալ դաշտային
բերքերի եկամուտներն աւելացնելու գաղտնիքը...
Մարդկանց ես առաջուանից պակաս չեմ սիրում և
զրա համար էլ թող չտուի, որ իմ ցուցմունքների
համաձայն ցածահողի շահամուր Ծծէ ժողովրդի հիւթը:

Աշակերտներն ամօթահար եղան իրանց փոքր
ինչ առաջ տարած անհիմն տարակուսանքների
համար, բայց շուտով դարձեալ միևնույն մեղքի
մէջ ընկան:

Նախարարի ազգականներից մինը, փիլիսո-
փայի աչքին լաւ երեւալու ցանկութեամբ՝ նորան
ընծայեց իբրեւ խորին չարգանքի նշան 1000 չափ
բրինձ: Այս ընծան աչն ժամանակուայ սաստիկ
թանկութեան պատճառով իսկ որ թագաւորական
ընծայ էր: Կօնֆուցիոս ընծան ընդունեց՝ ցոյց տա-

լով որ իբր թէ ստանում է իրան պատկանելիքը,
և ոչ մի խօսքով չչափանց իւր շնորհակալութիւնը:
Աշակերտները կրկին վրդովուեցան, բայց նրանց
վրդովմունքը փոխուեցաւ խիստ ուրախութեան,
երբ Կօնֆուցիոս ընծայած բրինձը բաժանեց աղ-
քատներին, տարուայ անլաջող լինելու պատճառով
զրկուած ու կարօտ մարդկանց:

— Նմացած եղէք, ասաց նա աշակերտներին,
որ այստեղ ես ես հաւատարիմ եմ իմ սկզբունք-
ներին: Ես ճշտութեամբ արդարացրի իմ կաշառա-
տուի յոյսերը: Նա սպասում էր իմ շնորհակալու-
թեան. այժմ շնորհակալ են հարիւրաւոր մարդիկ:
Նա ուզում էր միայն ինձ դուր գալ, բայց դուր
եկաւ, թէև ակամայ, ամբողջ ժողովրդին: Կարելի է
այս բանը տեսնելով՝ նա կհասկանայ, թէ ինչ է
նշանակում լինել իսկական բարեգործ և ինչի հա-
մար պէտք է գործածել երկնքի տուած հարստու-
թիւնը... Մեծատան ընծան չընդունելով՝ ես ցոյց
կտայի ատելութիւն ու գոռոզութիւն. բայց ընդու-
նելով նրան և չվերցնելով մի հատիկ անգամ, այլ
բաժանելով չքաւորներին՝ ես վարուեցի այնպէս,
ինչպէս որ պէտք է:

Չինաց պատմագիրները պատմում են շատ
այսպիսի դէպքեր, որոնք վկայում են մեծ փիլիսո-
փայի հոգու վեհութեան և ազնիւ բնաւորութեան
մասին: Սրանց մէջ Կօնֆուցիոս երեան է գալիս
որպէս մի մարդ, որն ինքն անձամբ գործադրում է

իւր ասածները, քարոզածներն ու բարոյական կանոնները:

Չինաստանի թշուառ դրութիւնը ստիպում էր ժամանակակից մարդկանց՝ աղղ դրութիւնը փոխել: Ամենալաւ մտածողներ որոնում էին այնպիսի միջոցներ, որոնցով կարելի լինի բարեւաւացնել և բարձրացնել տէրութեան բարոյական և նիւթական կեցութիւնը: Բայց, ինչպէս որ ներածութեան մէջ ես ասուած է՝ նրանք ցանկացեալ նպատակին հասնելու միջոցների մէջ միմեանց հետ բոլորովին չէին համաձայնում:

Գործերի այս դրութեան բնորոշ պատկեր է ներկայացնում Կօնֆուցիոսի հետեւեալ խօսակցութիւնը իւր աշակերտների հետ: Մի անգամ Կօնֆուցիոս, որ ամեն բանի մէջ օրինակ էր տալիս իւր համաքաղաքացիներին, թէ ինչպէս պէտք է հնազանդել հին կրօնական օրէնսդրութիւններին՝ իւր երեք աշակերտների հետ Նունզ սարի վրայ բարձրացաւ, երկնքին զոհարելութիւն անելու համար: Նա սարի գագաթին կանգնեց և սկսեց նայել շրջակայքի վրայ, որի ժամանակ նրա դէմքի վրայ խիստ տխրութիւն եկաւ:

Աշակերտների այն հարցին, թէ ինչ պատահեց նրա հետ, ինչ է նրա տխրութեան պատճառը՝ նա պատասխանեց.

—Նա տխրեցա՛յ՝ մտածելով հայրենիքի թըշուառութեան մասին, երբ արտերի վրայ նայելով՝

ցիշեցի մեր հայրենիքը կործանող խռովութիւններն ու երկպառակութիւնները: Աւելի տխրեցնում է ինձ ներկայ թշուառութիւններին օգնելու և ապագայում դրանցից խուսափելու դժուարութիւնը: Արդեօք չէ՞նք կարող այս մասին խորհուրդ անել միասին.... աւելացրեց նա քիչ լեռնոյ՝ Տսի, դուք առաջինն ասացէ՛ք ձեր կարծիքը, դարձաւ նա դէպի աշակերտներից մինը:

—Նա կոողովէի ահագին զօրախումբ և զէնքի ոյժով կհնազանդեցնէի խռովարարներին, պատասխանեց Տսի: Այլոց օրինակ լինելու համար՝ գերիւրիներին մահուան պատժի կենթարկէի և կարգը հաստատելուց լեռնոյ՝ կհաստատէի նախնի աստուածապաշտութիւնը:

—Գուք քաջ էք, ասաց նորան Կօնֆուցիոս. —հապա դուք ինչ կասէք, հարցրեց նա միւս աշակերտին:

—Նա ուրիշ կերպ կանէի, պատասխանեց նա: Ներկայումս Տսի և Տսու իշխանութիւնները աւկներե թշնամացած են միմեանց հետ և պատրաստուած են պատերազմի, միեւնոյնը նկատուած է և ալ իշխանութիւններում: Հէնց զօրքերը դաշտ դուրս գալուն պէս՝ ես շքազգեստ հագած նրանց առաջ կենէի և կխնդրէի ուշադրութեամբ ինձ լսել: Նա կաշխատէի իմ պերճախօսութեան բոլոր ոյժով պատկերացնել պատերազմի բոլոր թշուառութիւնները և խաղաղութեան բարիքները, ես մնայլ

գոյներով կնկարագրէի պատերազմի բոլոր հետեւանքները և երկու կողմերի կանանց և երեխայոց ապագայ սգալի դրութիւնը: Կարելի է իմ խօսքերը կներգործէին երկու թշնամացած կողմերի վրայ, նրանք կհաշտուէին միմեանց հետ և երկրի մէջ խաղաղութիւնը կտիրապետէր:

—Դուք պերճախօս էք, պատասխանեց Կօնֆուցիոս: Յետոյ նա հարցրեց երրորդ աշակերտին:

—Նս կցանկանալի ապրել իմաստուն և առաքինի թագաւորի մօտ, որը ինձ կմօտեցնէր իւրան և որին ես օգտակար կլինէի իմ թոյլ ընդունակութիւններով: Հրաւիրուելով թագաւորի մօտ՝ ես նորան կասէի. Խէտն և Իէու բոցերը (առաջինը —անուշաբույր, իսկ երկրորդը—գարշահոտ) մի դաշտի մէջ միմեանց հետ չեն հաշտուում: Մեծն Նաս և ցած Աիէ միեւնոյն ժամանակ չէին կարող թագաւորել, և ես կխնդրէի թագաւորից՝ ամենից առաջ հեռացնել կեղծաւորներին և նրանց տեղ հրաւիրել բոլոր առաքինի մարդկանց և լանձնել նրանց ժողովրդին ուսուցանելու հինգ բարձրագոյն պարտականութիւններ — մարդասիրութիւն, արդարադատութիւն, սէր դէպի ճշմարտութիւն, հաւատարմութիւն և ազնուութիւն: Նս կասէի թագաւորին, որ ալսպէս վարուելով՝ նա ալեւս ստիպուած չպիտի լինի վախենալ թշնամիներից, այն ժամանակ կարեւորութիւն չպիտի լինի բազմաթիւ զօրքի, քաղաքները չպիտի ամրացուին, պարիսպները

պիտի քանդուին, խանդակները լցուին և դարձուին պտղատու արտեր. ամբոցների քարերը պիտի ծառայեն հանրօգուտ շինութիւններ կառուցանելու համար, իսկ մահաբեր թնդանօթները երկրագործական գործիքներ պիտի դառնան, զինուորները խաղաղասէր քաղաքացիներ, տաղանդաւոր ճարտասաններ պիտի օրինակ դառնան իրանց համաքաղաքացիներին ոչ թէ խօսքով, այլ գործով... Այն ժամանակ մարդիկ, կարծեմ, կարող էին բախտաւոր լինել: Եթէ ես մոլորուած եմ՝ խնդրում եմ՝ վարժապետ, ցոյց տուէք ինձ ճշմարտութեան ճանապարհը:

—Դուք ճշմարիտ իմաստուն էք, պատասխանեց Կօնֆուցիոս խիստ սրտաշարժուած: Աշակերտի խօսքերը արտայայտեցին այն գաղափարը, դէպի որը դիմում էր փիլիսոփան ալդքան տարիների ընթացքում՝ բալց անյաջող:

ԳԼՈՒԽ Զ.

Կօնֆուցիոս որպէս քաղաքական գործիչ:—Նրա ձեռք առած միջոցները ժողովրդի կացութիւնը բարելաւելու համար:—Կօնֆուցիոս նշանակում է բարձրագոյն դատաւոր: Թշնամիների որոգայթները և Կօնֆուցիոսի պաշտօնաթող լինելը:—Անյաջողութիւնները սաստիկ վշտացնում են Կօնֆուցիոսին:

Վերջապէս 44 տարեկան հասակում բախտը ժպտաց Կօնֆուցիոսին: Լու իշխանութեան մէջ խռովութիւնները դադարեցին և իշխանը Կօնֆուցիոսին նշանակեց մայրաքաղաքի և նրա շրջակայքի կառավարիչ: Ահա այստեղ փիլիսոփայի համար բացուեցաւ գործունէութեան ընդարձակ ասպարէզ: Ամենից առաջ նա զբաղուեց ժողովրդի գիւղատնտեսական կեցութիւնը բարելաւելով: Այս նպատակին հասնելու համար աշխատեց մօտենալ հասարակ ժողովրդին. լաճախ նորանց հետ խօսում ու խորհրդակցում էր, ուշադրութիւն դարձնելով բոլոր արդարացի նկատողութիւնների վրայ: Նա վերանորոգեց նախնի իմաստուն բողոքիսաններից հաստատուած՝ հողերը բաժանելու հին սխտեմը: Նա

հողերը բաժանեց հինգ կարգի. 1) բարձրագիւր և նիհար հողեր, 2) ցածրագիւր և ճահճալիւն, 3) աւազոտ, 4) պարարտ և կաւախառն, 5) ալնալիսի հողեր, որոնց պարարտացնելով և լաւ մշակելով կարելի է լաւ հունձ ստանալ: Հողերի տեսակների համեմատ նա ցոյց է տալիս, թէ որը պէտք է ցանել, որը մշակել, և որոշում էր ճշտութեամբ ցանելու և հնձելու ժամանակը: Մի խօսքով նա վերանորոգեց և բարեփոխեց գիւղատնտեսութեան վերաբերեալ հին օրէնսդրութիւնները: Բացի դրանից՝ նա իմանալով որ հարուստ մարդիկ շատ պարարտ հողեր դարձրել են գերեզմանոցներ, որոնք միեւնոյն ժամանակ և ծառայում էին իբրեւ զուարճալի զբօսավայրեր՝ վճռեց արմատախիլ անել այդ վնասակար սովորութիւնը:

—Գերեզմանոցները, ասաց նա, չպէտք է զբօսավայրեր լինին: Նախնիք նրանց անուանում էին արտասուքի և հառաչանաց տեղ: Քէֆ անել նրանց մէջ և զուարճանալ՝ նշանակում է ծաղրել մեռելներին: Թաղման տեղերը պիտի լինին բոլորովին անպտուղ և անպարարտ հողեր. նրանց չպէտք է շրջապատեն ծառերով կամ պարիսպներով: Նրբ գերեզմանները չեն նմանի պարտէզների՝ միայն ալն ժամանակ լալտնի կլինի, որ ժողովուրդը ալցելում է գերեզմանները հանգուցեալների փշատակը անկեղծաբար լարգելու համար և ոչ թէ անգործութիւնից կամ հետաքրքրութիւնից դրդուած:

Այս խելացի կարգադրութեան շնորհիւ շատ բարեբեր հողեր փոխանակ իզուր կորչելու սկսեցին մշակուել: Նոյնպիսի անձնութեամբ էր վերաբերուում Կօնֆուցիոս նաեւ գիւղատնտեսութեան մնացեալ ճիւղերին: Նրա ջանքերն անօգուտ չանցան և կարճ ժամանակի մէջ առաջ բերին ամենափալուն արդիւնք:

Խելացի կառավարութեան ներքոյ ժողովուրդը բարեկեց իւր նիւթական կեցութիւնը, իսկ ժողովրդի հարստութեան մեծանալու համեմատ՝ հետզհետէ բարձրացաւ և նրա բարոյակալութիւնը: Կօնֆուցիոսի այս քրտնաջան աշխատութիւնը վարձատրելու համար՝ իշխանը նրան նըշանակեց ամբողջ իշխանութեան բարձրագոյն դատաւոր, տալով նորան իրաւունք հին օրէնքները բարեփոխելու և նորերը մտցնելու: Այս կարգադրութեան շնորհիւ Կօնֆուցիոս իշխանից լետոյ երկրորդ անձը դարձաւ երկրի մէջ թէ՛ նշանակութեամբ և թէ՛ իրաւունքով:

Նոր պաշտօնի մէջ ևս նա իրան հաւատարիմ մնաց. խիստ հետամուտ էր լինում լանցաւորներին, առանց դասակարգի խտրութեան, իսկ արժանաւորներին, վարձատրում պարգևներով: Պատմենք մի քանի դէպքեր նրա դատաստանական գործունէութիւնից:

Նա գիտէր, որ մի հարուստ հողատէր կապալով առել էր մսավաճառութիւնը. նա գնելով

գիւղացիներին մեծ քանակութեամբ շատ աժան մսացունելը՝ մաս-մաս ծախում էր երեք անգամ թանկ գնով: Կօնֆուցիոս իմանալով որ այս մենավաճառութեան ամբողջ ծանրութիւնը ընկնում է միայն ժողովրդի աղքատ դասակարգի վրայ՝ վրձուեց հէնց արմատի մէջ չքացնել չարիքը. նա կանչեց իւր մօտ մենավաճառին:

— Նս լսել եմ, ասաց նա մենավաճառին, որ դուք քաղաքի ամենահարուստներից մէկն էք: Ինձ համար շատ ուրախալի կլինէր, եթէ դուք ձեր հարստութիւնը ձեռք բերած լինէիք ազնիւ աշխատանքով: Կրա համար դուք արժանի էք սարստփելի պատժի, որն այնուամենայնիւ ես կիփոխեմ ուղորմածութեան, բայց միայն այս պայմանով, որ դուք պէտք է վերադարձնէք ժողովրդին այն ամենը՝ ինչ որ լստիչտակել էք նրանից: Այս կարելի է անել առանց արատաւորելու ձեր պատիւը: Ձեր բոլոր հարստութիւնից պահեցէք ձեզ մօտ այնքան, որքան որ ձեզ հարկաւոր է ապահով ապրելու համար, իսկ մնացածը ինձ լանձնեցէք: Նս կարող եմ նրան ծառայեցնել իւր նպատակին: Մի արդարանաք, մի կարծէք, որ ինձ կարող էք խաբել. ձեզ մի քանի օր ժամանակ եմ տալիս.....

Կապալաւորն հնազանդուեց Կօնֆուցիոսին, և նրա հարստութիւնը ծառայեց հասարակութեան օգտին՝ իբրեւ «կամաւոր նուիրաբերութիւն»:

Մի անգամ էլ իմաստունի մօտ եկաւ մի հայր,

որը գանգատուում էր իւր անհնազանդ որդու վրա՝ Կօնֆուցիոս երկուսին էլ դատապարտեց եռամսեայ բանտարկութեան:

Ժամանակը լրանալուց յետոյ՝ նա երկուսին էլ կանչեց և հօրից հարցրեց, թէ ինչ էր խնայէս որդու լանցանքը: Սա պատասխանեց, որ մեղաւորը որդին չէ, այլ ինքը, և որ գանգատուել է բարկութեան ազդեցութեան տակ: Կօնֆուցիոս գովեց նրան անկեղծ խոստովանութեան համար և ասաց.

— Նախ քան դատաւորին դիմելը, ինքներդ խրատեցէք ձեր որդուն. իսկ դուք, դարձաւ նա դէպի որդին, միշտ լիչեցէք, որ մեր առաջին պարտաւորութիւնն է հնազանդել մեր ծնողներին:

Կօնֆուցիոս միշտ էլ այսպիսի թեթեւ միջոցների չէր դիմում: Կարևոր դէպքերում գործադրում էր մինչև անգամ մահուան պատիժ: Օրինակ, նոր պաշտօնն ստանձնելով՝ նա մահուան պատիւ ենթարկեց իշխանութեան նշանաւոր պաշտօնեաներից մէկին, որը բազմաթիւ լանցանքներ էր գործել, իշար գործ դնելով իւր մեծ պաշտօնը: Ինքը Կօնֆուցիոս այսպէս էր խօսում դատաւորի պարտականութեան մասին:

— Դատաւորը, որ առանց բացառութեան պատժում է բոլոր օրինազանցներին՝ նման է այն զօրապետին, որը կողոպուտի է ենթարկում իւր զէնքով տիրած քաղաքը: Ռամիկ լանցաւորը չափ միայն կիսով չափ է մեղաւոր լինում, իսկ

չափ անգամ և անմեղ է լինում այն պատճառով՝ որ չէ հասկանում իւր պարտաւորութիւնները: Ամենախիստ պատժի են արժանի բարձր դասակարգի լանցաւորները նրա համար, որ վատ օրինակ են տալիս ժողովրդին, և կառավարիչները, որոնք իրանց ստորադրեալներին չեն ներշնչում ուսուցանել ժողովրդին: Այսպիսի լանցաւորներին զիջողութիւն անել նշանակում է լինել անարդար և աչառու: Պատժեցէք, ասուած է հին գրքերում, մահով պատժեցէք նրանց, որոնք զորան արժանաւորում են ծանր և գիտակցաբար գործած լանցանքի համար: Նախ սովորեցրէք ժողովրդին և ապա, երբոր նա գիտակցաբար չէ հնազանդում՝ պատժեցէք:

Կօնֆուցիոս իր դատաստանական գործունէութեան ընթացքում խստութեամբ հետևում էր այս կանոնին: Իբրև իմաստուն դատաւոր՝ նա ժողովրդի մէջ զարթեցրեց լարգանք դէպի իշխանութիւնը, իբրև հմուտ և մարդկանց լաւ ճանաչող քաղաքագէտ՝ նա օգտաւէտ եղաւ իւր պետին և հալընիւթին: Շատ անգամ նա ազատեց իշխանին հակառակորդների լարած դարաններից: Կօնֆուցիոսի չնորհիւ Լու իշխանութիւնը զօրացաւ, որը և շարժեց չրջակալ իշխանութիւնների նախանձն ու երկիւղը:

Սրանք ամեն միջոց գործ էին դնում իշխանի առաջ վալր ձգելու Կօնֆուցիոսի պատիւն ու

հեղինակութիւնը և ատելի դարձնել նրան: Այս միջոցներից մէկը լաջողութիւն գտաւ: Լու իշխանին իբրեւ պարգև ուղարկեցին 120 ամենալաւ նըժուգներ և 13 պարող ու երգող զեղեցիկ աղջիկներ: Իշխանը աջակէս լախշտակուեց դրանցով, որ զաղարեց Կօնֆուցիոսի վրայ ուշադրութիւն դարձնելուց և շուտով էլ բարկացաւ փիլիսոփայի վրայ՝ սրա արած մի անպատշաճ նկատողութեան պատճառով: Այն ժամանակ Կօնֆուցիոս հեռացաւ Լու իշխանութիւնից և կրկին սկսեց ճանապարհորդել իւր աշակերտների հետ, ամեն տեղ տարածելով իւր վարդապետութիւնը: Վերանորոգչին, ինչպէս և առաջ, ամեն տեղ ընդունում էին մեծ պատուով ու լարգանքով, բայց միայն սրանով էլ գործը վերջանում էր:

Կօնֆուցիոս իւր աջակէս բոլոր իշխանութիւնների մէջ աշխատում էր գրաւել իշխաններին դէպի իւր վարդապետութիւնը, յորդորում էր նրանց վերանորոգութիւններ մտցնել: Բայց ամեն տեղ գտնում էր միայն սառն անտարբերութիւն— ժամանակի մտածողներից շատերը զեռ զաղախար չունէին խաղաղ վերանորոգութեան մասին և աւելի հաւատում էին զէնքի ոյժին:

Այս անյաջողութիւնները վշտացրին Կօնֆուցիոսին, և նա իւր վիշտն արտայայտեց հետեւալ ողբերգով.

«Լան Խօա ծաղկի անուշահոտութիւնը արբե-

ցուցիչ է. բացի անուշահոտութիւնից՝ նրա ալ բաղմաթիւ օգտակար լատկութիւնները ստիպում են մեզ աւելի գնահատել նրան: Դժբախտաբար այդ ծաղկը շատ քնքուշ է. նա ամենամեղմ հովից անդամ թարչամում է և արմատից բաժանում: Ի՞նչ է անում այն ժամանակ խեղճ ծաղկը: Քամիների խաղալիք դարձած՝ մի կողմից միւսն է ընկնում երկրի տարածութեան մէջ, մինչև որ մի անկիւն գտնէ պատսպարուելու համար: Բայց այստեղ ևս անապատի մէջ թառամում է ծաղկը և ոչնչանում: Խմաստութիւնը մարդկանց տալիս է հաստատուն և իսկական զուարճութիւն. նա պէտք է լինի իսկապէս մեր բոլոր ցանկութիւնների և մտածութիւնների վերջնական նպատակը.... Բայց փոթորկալի կրքերը նորան թշնամի են, ինչպէս փոթորկը ծաղկին. կրքերը վանում են խմաստութիւնը— և չկալ նրա համար մի պատսպարան: Միթէ իրաւի նա մի օթեան չպիտի գտնէ: Օրերս վերջանալու վրայ են. շուտով կվերջանալ իմ կենաց ճանապարհը: Ժամ է ինձ համար մի օթեան գտնելու: Խմաստունի համար ամեն տեղ լաւ է. բոլոր աշխարհը նրա սեփականութիւնն է»:

Բացի անտարբերութիւնից՝ փիլիսոփան եւթարկւում էր ատելութեան և մինչև անգամ հաւածանքի:

Սուրբ իշխանութեան մէջ քաղաքից դուրս մի հարթ մարգագետին կար, որի վրայ բուսած էր

մի մեծ ստուերախիտ ծառ: Այս ծառի տակ Կօնֆուցիոս սիրում էր խօսել իւր աշակերտների և բազմաթիւ ունկնդիրների հետ: Խօսակցութեան մէջ Կօնֆուցիոս շօշափում էր բարոյական և կրօնական կեանքի բոլոր կողմերը:

Նրա աշակերտներից մէկը, որ նշանակուել էր քաղաքի կառավարիչ՝ դիմեց իւր վարժապետի խորհրդին: Կօնֆուցիոս ասաց նորան.

— Գործերի մէջ միշտ ջանասէր և ուշադիր եղէք. աշխատեցէք զատել սուտը ճշմարտից և ճշմարիտը հաւանականից: Եղէք արդարասէր, անշահասէր, հաւատարիմ դէպի ձեզ: Արդարադատութիւնը աշուտութիւն չգիտէ: Անշահասիրութիւնը ճանապարհ է ճշմարտութեան: Շահասէրը չէ կարող արդարադատ լինել. ամեն մի ընծայ, ամեն մի պարգև, որ ստացւում է չքաւորներից, ինչ պատուակով էլ առնուած լինի՝ ներկայացնում է ամենաստոր գողութիւն: Մատչելի եղէք ամենին: Ոչ ոքի մի ցուցնէք մուլ կերպարանք. ամենի հետ վարուեցէք մեղմ կերպով և փաղաքշանօք: Որեւէ գործ վճռելու ժամանակ մի շտապէք, ալլ քննադատեցէք ամեն կողմից: Տարէնը չորս անգամ հրաւիրեցէք ժողովրդին և բացատրեցէք նորան իւր պարտաւորութիւնները: Եթէ հասարակ ժողովուրդը չէ իմանում աչն, ինչ որ պէտք է անէ, արդեօք մեղաւոր է նա, եթէ չէ կարողանում կատարել աչն, ինչ որ պարտական է: Միթէ օրինազան-

ցութեան համար նրան կարելի է մեղադրել, քանի որ նա օրէնքի գոյութեան մասին անգամ զաղափար չունի: Հասարակ ժողովրդին մի ձգէք զաշտային պարապմունքներից, ստիպելով նրանց աշխատել ճանապարհներ և կամուրջներ շինելու համար: Ամեն ինչ իւր ժամանակն ունի:

Մի ուրիշ անգամ Կօնֆուցիոս մարդուս և նրա պարտաւորութիւններին հետեւալ որոշումն է տալիս.

— Մարդս ուրիշ կենդանի արարածներից զանազանւում է իւր բանականութիւնով, որ երկնային պարգև է: Հօր ու մօր մասերը միանալով լացտնի գործարանում՝ կազմում են գոյութեան պատճառը, վառնդի երկու սկզբունքների միաւորութիւնն է ամեն ինչի գոյութեան աղբիւրը: Նորածինը բաւի բուն նշանակութեամբ դեռ մարդ չէ. նա մարդ է դառնում միայն աչն ժամանակ, երբ երկինքը պարգևում է նորան բանականութիւն, մտածելու ընդունակութիւն: Քանի որ բանական արարածը օգտւում է իւր մարմնական և մտաւոր ընդունակութիւններով՝ նա ապրում է, բաց հէնց որ երկու սկզբունքները (հոգեկան և մարմնական) բաժանւում են՝ նա մեռնում է: Մարդս աստիճանաբար զարգանում է և աստիճանաբար էլ կործանւում: Բաց կործանումը վերջնական չէ. սրանով միայն մարմինը լուծւում է և բաժանւում իւր բաղադրիչ մասերին, որոնցից իւրաքանչիւրը վե-

բաղաւնում է զէպի իւր սկզբունքը, — բանակա-
նութիւնը վերադառնում է զէպի իւր սկզբունքը.
հոգին խառնւում է օդի հետ, իսկ պինդ ու հեղուկ
մասերը դառնում են հող և ջուր. մարդը, ինչպէս
որ սովորեցրել են նախնի իմաստունները՝ մի ա-
ռանձին տեսակ արարած է, որ պարունակում է
իւր մէջ բոլոր միւս արարածների չափութիւննե-
րը: Ի միջի ալլոց նա ունի կատարելագործուելու
և ալլանդակուելու ընդունակութիւններ, նաեւ լով
կամքի ի բարին կամ ի չարն զորժ գնելուն: Չար
գործերի համար նա արժանի է պատժի, իսկ բա-
րի գործերի համար՝ վարձատրութեան: Այսպէս
է մարդը:

Կօնֆուցիոսի կարծիքով՝ մարդիկ իրանց բա-
րօյական և մտաւոր ընդունակութիւնների համե-
մատ բաժանւում են հինգ դասակարգի: Առաջին
դասակարգին պատկանում են այն բազմաթիւ մար-
դիկ, որոնք ոչ մի առանձին ընդունակութիւն չու-
նին, մարդիկ, որոնք խօսում են միայն նրա հա-
մար, որ խօսած լինին, որոնք չեն ել մտածում
իրանց ասածի վրայ, սովորութեան մարդիկ, ո-
րոնք ապրում են կենդանական կեանքով և չեն
կարողանում ոչինչ անել առանց ալլոց ցուցմուն-
քի: Այս դասակարգի մարդկանց հասկացողութիւն-
ները, Կօնֆուցիոսի կարծիքով, աչքերի, ականջ-
ների և բերանի սահմանից չեն անցնում: Երկրորդ
դասակարգին պատկանում են գրագէտ և կրթուած

մարդիկ, այնքան զարգացած՝ որ կարողանում են
հասկացողութիւն կազմել այնպիսի առարկաների
մասին, որոնք անմատչելի են հասարակ մարդուն:
Այս մարդիկ ապրում են գիտակցական կեանքով,
օրէնքի և սովորութիւնների համեմատ: Երրորդ
դասակարգին պատկանում են առողջ դատողու-
թեան տէր մարդիկ, որոնք երբէք չեն բաժան-
ւում նրանից: Նրանք միակերպ են թշուառու-
ւում և ուրախութեան մէջ, անդրդուելի, առա-
թինի. կարողանում են խօսել, նոյնպէս և լռել:
Այս մարդկանց Կօնֆուցիոս փիլիսոփաներ էր կո-
չում: Չորրորդ դասակարգին պատկանում են ճշմար-
տասէր և զուտ առաքինի մարդիկ, և վերջապէս
հինգերորդ, ամենափոքրաթիւ դասակարգին պատ-
կանում ըստ ամենայնի կատարեալ մարդիկ:

Առնդ իշխանութեան մէջ Կօնֆուցիոս իւր
ամբողջ ժամանակը անցնում էր այսպիսի զրոյց-
ներով: Այս ժամանակ նրա աշակերտների թիւը
3000-ի հասաւ, բացի պատահական ունկնդիրներից:
Բանն այնտեղ հասաւ, որ չիչեալ իշխանութեան
զօրապետը անբաւական լինելով այս ժողովներից՝
փիլիսոփային հառարակաց անդորրութիւնը խա-
ղարող հրատարակեց, հրամայեց վռնդել նրա աշա-
կերտներին և ունկնդիրներին և ծառը կտրել:

Կօնֆուցիոս կրկին սկսեց թափառել և շու-
տով մտաւ Տաա'ի իշխանութիւնը, որի մէջ ապրեց
սակայն առանց որեւէ օգուտ բերելու: Հարեան

Չփին իշխանութեան մէջ նորան լաջողուեց ազատել մահուան դատապարտուած երեք աւազակներ: Երկրի իշխանը սիրով վերաբերուեց զէպի փիլիսոփան, բայց նախարարները նախանձից, կարծելով, որ Կօնֆուցիոս իրանց համար կ'ներկայանայ իբրեւ վտանգաւոր հակառակորդ՝ նրան իւր աշակերտներէ հետ բանտարկեցին: Բանտի մէջ փիլիսոփան մի շաբաթ մնաց, որից լետոյ նա ազատուեց հարեան իշխանութեան ղօրքերով: Կօնֆուցիոս արիաքար տարաւ այս բոլոր թշուառութիւնները. նա այնքան հոգու ոյժ ունէր, որ մինչև անգամ կարողանում էր մխիթարել իւր աշակերտներին: Բանտարկութիւնից ազատուելով՝ Կօնֆուցիոս աշակերտների հետ այցելեց Տալ-չան անուանեալ սուրբ լեռը, նախնի բողոքիսանների զոհարանը, որ սակայն Կօնֆուցիոսի ժամանակ բոլորովին մոռացուած ու բարձի թողի էր արուած: Սուրբ տեղի այս անկեալ դրութիւնը խիստ մոռալ մտածմունքների մէջ ձգեց փիլիսոփային: Այս ժամանակ նրա հոգու մէջ կրկին կասկած ծագեց իւր վարդապետութեան ապագայի մասին: Այսպիսի մոռալ մտքերի ազդեցութեան տակ, Կօնֆուցիոս ասաց իւր աշակերտներին.

— Լեռան դադաթին չես կարող հասնել՝ մինչև որ չանցնես քարքարոտ ու դժուարանցանքի կիրճերով ու կածաններով: Առանց աշխատանքի և ջանքերի չէ կարելի հասնել առաքինութեան:

Առանց հաւատարիմ ուղեկցի անձանօթ ճանապարհով գնալ՝ նշանակում է ենթարկուել վտանգների, մոլորուել կամ մինչև անգամ կորչել: Ես ուզում էի բարձրանալ Տալ-Շանի գագաթը, որպէսզի կըրէին զուարճանամ նրա շրջակայքի հրաշալի տեսարաններով: Ինձ չվախեցրին ոչ լեռան բարձրութիւնը, ոչ նրան ծածկող տերևախիտ ծառերը, ոչ խորխորատներն ու անդունդները: Ես իմանում էի, որ անտառներում կածաններ կան, իսկ խորխորատների վրայ կամուրջներ, և հանգիստ էի.... Բայց աւանդ... Ես խաբուեցայ. կածանները անպատասան փշերի ու տատասկների տակ. նրանց տակից չէ կարելի որոշել, թէ ո՞ր կածանը ո՞ր կողմն է տանում, կամուրջները հնացած, շատերը մինչև անգամ կործանուած.... Ես այնքան ոյժ ունիմ, որ կարողանամ նոր կածաններ բանալ, նոր կամուրջներ շինել: Ո՛ւր են դրա համար անհրաժեշտ գործիքներ.... Կրքերը խափանել են առաքինութեան սերմերի աճելու ճանապարհը: Արդեօք կարող եմ դրանց ազատել այս որմններից: Իզուր էին իմ ջանքերը, որոնցով ցանկանում էի մարդկանց ցոյց տալ առաքինութեան ճանապարհը: Այս բոլոր անլաջողութիւններից լետոյ ինձ բաժին է մնում միայն արցունք և հառաչանք....

ՓԼՈՒՆ Է.

Հայրենիք վերադառնալը.— Կօնֆուցիոսի կեանքի վերջին տարիները:— Նրա մահը և թաղումը:— Մահուանից լիտոյ Կօնֆուցիոսին յոյց տրուած լարգանքը:

Նրկար ճանապարհորդելուց լիտոյ Կօնֆուցիոս վերջապէս վերադարձաւ իւր հայրենիք Լու իշխանութիւնը: Այստեղ նա իմացաւ, որ կինը մեռել է: Լսելով ալս վշտալի լուրը՝ փիլիսոփան ասաց.

— Ամուսինս մեռաւ. ես էլ չուտով կհետեւեմ նորան: Այնուամենայնիւ կեանքիս մնացեալ օրերը պէտք է դործ դնեմ օգտաւէտ կերպով: Միթաքեցէք իմ որդուն և աշխատեցէք, որ նա իրան շատ չմաշէ ալս անբախտութեան համար:

Կեանքի վերջին տարիները իմաստունը ամբողջովին նուիրեց իւր աշակերտներին: Քաղաքի շրջակայքում մի քանի բլուրներ կային, որոնք ժամանակով ծառալուծ էին իբրեւ զոհարաններ, իսկ Կօնֆուցիոսի ժամանակ դարձել էին զբօսալայրեր: Այս բլուրների շուրջը շինուած էին բազմաթիւ տաղաւարիկներ, որոնց մէջ Կօնֆուցիոս ուսուցա-

նում էր իւր աշակերտներին: Նա աւելի լաճախացելու էր այդ բլուրներից մէկը, որ վերջը լայտնի եղաւ «Միրանի բլուր» անունով: Այստեղ Կօնֆուցիոս վերջնականապէս կարգի բերեց հին սրբազան գրքերը, նմանապէս և իւր հեղինակութիւնները: Փիլիսոփայի անելով՝ իւր 3000 աշակերտներից միայն 72-ը կարող էին բացատրել երաժշտութեան և ալլ զեղարուեստական գիտութիւնների օրէնքները: Իսկ առաքինութեան և իմաստութեան կանոնները կարող էին բացատրել միայն 12 աշակերտ: Այս աշակերտներն աւելի մը տերիւմ էին Կօնֆուցիոսին և կատարելապէս տեղեակ էին նրա փալիպաճ զաղափարների ու մտքերի հետ: Արանց մէջ Կօնֆուցիոս ամենից շատ սիրում էր Խեն-Սօէին, որին փիլիսոփան իւր լաջորդըն էր համարում. բայց սա իւր վարժապետից աւելի վաղ մեռաւ:

Մի անգամ փիլիսոփան իւր երեք աշակերտների հետ, մեծանուն Ֆու-սի-չի'ի Կերպարանափոխութիւնք անունով գիրքը քննելիս՝ մտածութեան մէջ ընկաւ իրերի քաղքայման և վերածնութեան մասին:— Ամեն բան իւր ժամանակն ունի, ասաց փիլիսոփան իւր աշակերտներին. աշխարհիս վրայ ամեն ինչ փոփոխուում է և աներևութանում՝ որ դարձեալ երեան զալ նոր ձևով. բայց դարձեալ քաղքայումն է լաջորդում, իսկ լիտոյ դարձեալ նորոգումն, և այսպէս լաւիտեան:

Ինչպէս երևում է՝ վերջին ժամանակները զառամեալ փիլիսոփան աւելի և աւելի էր մտածում մահուան մասին։ Եօթնասուն տարեկան հասակում նա կրկին Տայ-չան սուրբ լեռն ալցելէլու գնաց։ Նախագուշակելով իւր երկրային կեանքի վերջը՝ Կօնֆուցիոս ցանկացաւ գոհունակութիւն մատուցանել երկնքին, նրա առատ շնորհների և ողորմածութեան համար։ Նա ժողովեց իւր բոլոր աշակերտներին և նրանց հետ միասին բարձրացաւ շրջակայ բլուրներից մէկի վրայ։ Այստեղ նրանք սեղան շինեցին և նրա վրայ դրին Կօնֆուցիոսի հեղինակած վեց գիրքը։ Փիլիսոփան ծունկ չոգեւով և երեսը դէպի հիւսիս դարձնելով՝ աղօթեց երկնքին։ Մի քանի օրից լեռոյ նա կրկին կանչեց իւր աշակերտներին և լալտնեց նորանց իւր վերջին կամքը.

— Յայտնում եմ ձեզ վերջին անգամ. աշխատեցէք մտքերդ պահել իմ խօսքերը, նրանց մէջ է պարունակւում իմ կտակը։ Մարդ որքան էլ խելօք և կրթուած լինի՝ չէ կարող ամենապէտ հանճար լինել։ Իւրաքանչիւր մարդու ալ և ալ ընդունակութիւնների մէջ կլինի մէկը, որը գործի դրուելով՝ կարող է անպայման օգտակար լինել այն ասպարիզում, որ ընտրուած է այդ ընդունակութեան համաձայն։ Իսկ աւելի զարգացած ընդունակութեան տեղ ընտրելով մի թոյլ ընդունակութիւն՝ մենք պատճառ ենք դառնում բազմաթիւ չարիք-

ների և սխալների։ Մենք մէկ մէկու վաղուց գիտենք։ Ես կարողութեանս չափ կատարել եմ իմ սրբազան պարտաւորութիւնս ձեր վերաբերութեամբ։ Դուք ևս ձեր կարգին մասնակից էք եղել իմ հոգսերին ու ջանքերին և փորձով համոզուել էք այն բանի մէջ, որ գիտութիւնն ու իմաստութիւնը հեշտութեամբ չեն ձեռք բերւում, և որ պակաս դժուար չէ մարդու համար նրանց (իմաստութիւնն ու գիտութիւնը) իրանց նպատակին ծառայեցնելը։ Պետութեան մէջ գործերի ներկայ անմխիթար դրութեան ժամանակ մի լուսաք, որ իմ վարդապետութիւնը չաջողակ կերպով կտարածուի։ Դուք ինքներդ էլ տեսնում էք, արդեօք ես շատ բան եմ արել։ Կտակում եմ ձեզ իմ գրքերը, որպէս գիտութեան, իմաստութեան և օրէնքների թանկագին ժողովածու. նրանց մէջ է կայանում իմ վարդապետութեան ապագայ չաջողութեան գրաւականը։ Այս գրքերը մեր ապագայ սերնդին շանձնեցէք կատարեալ ճշտութեամբ։ Որպէսզի իմ կտակը չաջողութեամբ կատարէք՝ դուք պէտք է աշխատանքը ձեր մէջ բաժանէք ձեր ընդունակութեան համեմատ։ Մենդձի, Եան-պե-նիէու և Չոու-կուոնգ, ձեզ եմ շանձնում բարոյախօսական մասը։ Տսի-նգօ և Տսի-կուոնգ, դուք ունիք ճարտասանական շնորհք, վերցրէք ճարտասանական մասը։ Եան-նէու և Կի-լու, դուք որպէս կեանքի մէջ փորձուած մարդիկ՝ զբաղուեցէք պետական գործե-

րով, որպէսզի միջոց ունենաք աւելի մօտենալու ժողովրդին և նրա լուսաւորութեան դործին: Տախիւնդ և Տախիւ, դուք իբրև հնազանդներ՝ ուսուցէք ժողովրդին նախնեաց ծէսերն ու ջերմեռանդութիւնը: Այս կերպով ձեզանից իւրաքանչիւրը կկատարէ իմ կտակը և հաւատարիմ կմնայ իւր կոչման:

Մահուանից մի քանի օր առաջ փիլիսոփան պալատի բարձր աշտարակից հայում էր «Յրկրային ոգիներին» ժողովրդական տօնի վրայ: Այս տօնը կատարւում էր ի պատիւ երկրային ութ ոգիներին (Տա-չա), որոնք համարւում էին «բաշխողներ երկրային բերքերի» (պտուղներ, կանաչեղէններ և այլն): Տարէնը երկու անգամ էր կատարւում այս տօնը, մէկը զարնանամուտին և միւսը աշնանամուտին: Ժողովուրդը ուտում, խմում և պարում էր, մի խօսքով կատարելապէս զուարճանում էր: Փիլիսոփան հայելով այս տեսարանի վրայ՝ ասաց իւր մօտ գտնուող Տախի-կունդ աշակերտին:

— Ես շատ ուրախ եմ, որ ժողովուրդը, թէև ժամանակաւորապէս, մոռացել է իւր ցաւերն ու հոգսերը:

— Արդեօք աւելի լաւ չէր լինի, որ ժողովուրդը փոխանակ արեւցողութիւն անելու և ունայն զուարճութիւնների վտակից ընկնելու՝ աղօթէր ոգիներին և բերէր նորանց գոհունակութեան

գոհեր, հարցական եղանակով պատասխանեց աշակերտը:

— Դուք ուղիղ էք ասում, նկատեց Կօնփուցիոս. ժողովուրդը պէտք է շնորհակալ լինի երկնքից նրա շնորհած բարեքների համար. բայց պարերով և ուրախութիւնով ևս նա չպետք է իւր շնորհակալութիւնը: Նրան մի դատապարտէք զըւարճասիրութեան համար. սա մի հանգստութիւն է հարիւր օրուայ անընդհատ աշխատանքից վետոյ: Անդադրում աշխատութիւնը մաշում է մարմինը և հոգին այնպէս՝ ինչպէս որ աստիճանաբար թուլանում է ձգուած աղեղն ու լարը:

Այս միևնույն աշակերտը վկայ եղաւ նաև իւր վարժապետի վերջին բոսկիներին:

— Ումերս թուլանում են, ասաց Կօնփուցիոս, ևս այլ ևս չեմ առողջանալ:

Ապա արտասուելով ասաց.

— Ո՛ր չունիմ որ գլուխս բարձրացնեմ և նայեմ Տալ-չանի գաղաթին... իմ անդամները փրտած գերանակապերի նման են... մահիցս վետոյ ո՞վ պիտի լանձն առնէ իմ վարդապետութեան տարածելու ծանր աշխատանքը...

Այս էր նրա վերջին խօսքը: Ապա նա խորը քուն մտաւ, և եօթն օր գիտակցութիւնը կորցնելուց վետոյ՝ մեռաւ 73 տարեկան հասակում, 479 թ. Ք. ա.:

Կօնֆուցիոսի թաղումը կատարուեցաւ չինացի
հին ծէսերի և արարողութիւնների համեմատ:

Նրա որդին մեռել էր հօրից առաջ, իսկ թո-
ռը դեռ երեխայ էր և չէր կարող մասնակցել թաղ-
ման ծէսերին. ուստի այս պարտականութիւնը լան-
ծըն առան հանգուցեալ փիլիսոփայի երկու աշա-
կերտները:

Թաղման ներկայ էին նրա ազգականներն ու
աշակերտները: Հանգուցեալ փիլիսոփայի մարմինը
հողին լանձնելով՝ աշակերտները խոստացան լար-
գել իրանց ուսուցչի չիշատակը՝ երեք տարի սուգ
պահելով: Տսի-կուճոգ վեց տարի սուգ պահեց՝ ա-
պրելով իւր վարժապետի գերեզմանի վրայ, այդ նը-
պատակով չինուած խրճիթում: Չինաստանի ամեն
կողմերից եկող աշակերտները մի-մի ծառ բերին և
տնկեցին փիլիսոփայի գերեզմանի շուրջը: Հարիւր
մարդ ընտանիքով եկան իմաստունի հանգստարա-
նի մօտ բնակելու, որից կազմակերպուեցաւ մի
գիւղ, Կանգ-լի անունով: Սրանք իրանց տէր լաւ-
տարարեցին փիլիսոփայի թոռ Կանգլիին և խըն-
դրեցին նրան՝ իրանց ընդունել իբրեւ ճորտեր: Իշ-
խան Լու Կօնֆուցիոսի մահուան լուրն առնելով՝
բացազանչեց.

— Երկինքը զայրացաւ ինձ վրայ... Ես զըրկ-
ուեցայ անգնահատելի գանձից:

Յանկանալով որեւէ կերպ մեղմացնել իւր ա-
պերախտ վերաբերմունքը դէպի փիլիսոփան՝ իշ-

խանը հրամայեց նրա գերեզմանի մօտ մի մատուռ
շինել, որի մէջ նրա բոլոր աշակերտները և հե-
տեողները կարողանային լարգել մեծ մարդու չի-
շատակը՝ գոյութիւն ունեցող ծէսերի համեմատ:
Մատուռի մէջ դրին Կօնֆուցիոսի պատկերը, սե-
ղանի վրայ դրին նրա հեղինակութիւնները և պա-
տերից կախեցին նրա շքազգեստներն ու երաժըշ-
տական գործիքները. բացի դրանից մատուռի մէջ
դրին նաև փիլիսոփայի տնային կահ կարասիքը և
կառքը: Մատուռը բացուեցաւ մի փառաւոր և մին-
չև այն ժամանակ չտեսնուած հանդէսով: Իշխան
Լու Կօնֆուցիոսին ճանաչեց իւր վարժապետ: Աշա-
կերտները ուխտեցին տարէնը մի անգամ գալ և
կերտները վարժապետի գերեզմանի վրայ: Եր-
ազօթել իրանց վարժապետի գերեզմանի վրայ: Եր-
կու հազար տարուալ ընթացքում այս սովորու-
թիւնը պահպանուել է և պահպանուում է մինչև այ-
ժմ: Բացի դրանից՝ վերջերը Չինաստանի համա-
րեա իւրաքանչիւր քաղաքում մատուռներ շինուե-
ցան մեծ փիլիսոփայի չիշատակին: Գան հարստու-
թեան առաջին բողղիխանից սկսեալ (200 թ. Ք. ա.)
վեհապետների վրայ եւս պարտք դրուեցաւ կատա-
վեհապետների վրայ եւս պարտք դրուեցաւ կատա-
րել մեծ փիլիսոփայի չիշատակը լարգելու ծէսը:
Այդ ժամանակուանից փիլիսոփան սրբերի շարքը
դասուեցաւ, և սկսեցին նորան մատուցանել աստուա-
ծավայել լարգանքներ:

Վերջերը կարգադրուեցաւ, որ այն անձը,
որ ցանկանում է հարցաքննութիւն տալ որեւէ

գիտնական տիտղոս ձեռք բերելու համար՝ հարցաքննութիւնից առաջ պէտք է երկրպագութիւն մատուցանէ Կօնֆուցիոսի լիշատակին՝ նրա անուշով կառուցուած մատուռներէց մէկում: Միենոյնը պէտք է անէր և ալն մանդարինը, որ կամենում էր մտնել պետական ծառայութեան: Իշխան Լու, բայի մատուռներ կառուցանելուց՝ փիլիսոփային «Հայր Նի» տիտղոսը տուաւ: Գան հարստութեան (թագաւորական տոհմ) ժամանակ նորան տուին Կունգա (գուքս) տիտղոսը. Տանգ հարստութեան ժամանակ՝ Առաջին սուրբ տիտղոսը, և ապա նա կոչուեցաւ Կալսերական քարովիչ: Մինգ հարստութեան ժամանակ նրան կոչեցին ամենասուրբ, ամենիմաստուն և ամենաառաքինի ուսուցիչ՝ մարդկային ցեղի բոլոր ուսուցիչների մէջ: Հրամայուեց նրա նկարուած և քանդակագործ պատկերները պսակել կալսերական գլխարկով և զարդարել թագաւորական զգեստներով: Յարգանքի ալս ամենամեծ աստիճանը անփոփոխ պահպանուած է մինչև այժմ: Կօնֆուցիոսի սերունդները տոհմական ազնուականի կոչումն ստացան: Սրանց թիւը Կօն-խի կալսեր ժամանակ հասնում էր 11,000 հոգու արական սեռի:

Գ Լ ՈՒ Ն Ը.

Կօնֆուցիոսի վարդապետութեան յաջողութիւնը և նրա պատճառները.— Կօնֆուցիոսի և նրա վարդապետութեան բնորոշ յատկանիշը:

Կօնֆուցիոս, ինչպէս մահուան անկողնում, նոյնպէս և շատ անգամ իւր գործունէութեան ժամանակ լալտնում էր իւր երկիւղը ալն մասին, թէ չըջապատողների սանձարձակ վարք ու բարքի և պետական կեանքի թուլութեան պատճառով ոչ ոք չպիտի կարողանայ պաշտպանել և տարածել իւր վարդապետութիւնը: Բայց ինչպէս տեսնում ենք՝ աղբ երկիւղն անհիմն էր: Նրա մահով ալբ վարդապետութիւնը չթուլացաւ, ալ ընդհակառակը անագին ոլթ ստացաւ և մշտապէս արմատացաւ ժողովրդի զխտակցութեան մէջ:

Ինչո՞ւ ալսպէս եղաւ: Պատմութեան մէջ Կօնֆուցիոս, իբրեւ վերանորոգիչ, չէ նմանում ուրիշ նոյնատեսակ գործիչներին. նա իւր ժողովրդի կեանքի մէջ չմտցրեց ոչ մի նոր բան, մի ալնպիսի բան,

որ արդիւնք լինէր նրա ներքին մտաւոր և հոգեկան աշխատանքի: Նա ինքն ևս իրան նոր վարդապետութիւն ստեղծող և հռչակող չէր համարում, որպիսին նա չէր էլ իսկապէս: Այն ամենը, ինչ որ նա ուսուցանում է՝ և քարոզում էր՝ վաղուց լաւ տնել էին նախկին իմաստունները և գոյութիւն ունէր ամբողջի գիտակցութեան մէջ, թէ և չնորհիւ պետական ճնշող հանգամանքների՝ բոլորովին թուլացած և նսեմացած: Երբ որ Կօնֆուցիոսին հարցրին, թէ լաւ չի լինի արդեօք, որ նա պարզէ և փոքր ինչ մեղմացնէ իւր վարդապետութիւնը, որովհետեւ, կարելի է, այդ վարդապետութիւնը լաւ ողորդիւն չէ գտնում այն պատճառով, որ նրա սկզբունքները շատ բարձր, մաքուր և անմատչելի են մեծամասնութեան՝ նա պատասխանեց.

— Իմ վարդապետութիւնը մեր նախահայրերի կտակն է: Աս իրաւունք չունիմ նրան ոչինչ ոչ աւելացնելու և ոչ պակասեցնելու: Նս նրան ուսուցանում եմ իւր նախնական պարզութեամբ: Իմ վարդապետութեան վերաբերմամբ ես նույն եմ՝ ինչ որ սերմնացանը իւր ցանած սերմի վերաբերմամբ: Սերմնացանը կարող է արդեօք ալ ձև տալ սերմին, կամ ստիպել, որ նա ծլի, աճի և հնձուի՝ որոշեալ ժամանակից առաջ: Սերմնացանի գործն է հողի մէջ սերմեր գցել, նրանց ոռոգել, նրանց մասին հոգ տանել. մնացեալ բաները նրանից չեն կախուած....

— Իմ վարդապետութիւնը սովորական ուղիղ ճանապարհ չէ, ասում է նա, մատնացուց անելով իւր վարդապետութեան դժուարութեան և դանդաղ կերպով տարածուելուն վրայ. նա անփոփոխ է որպէս երկինքը, որ և նրա ստեղծողն է. նա վտակի նման հոսել է Նաօ'ի և Շուն'ի ժամանակներից:

Բայց չնայելով այս դժուարութիւններին՝ նրա վարդապետութիւնը բոլորովին համապատասխանում էր ժողովրդի ոգուն: Կօնֆուցիոսի հայեացքները բոլորովին համաձայն էին ամբողջ հայեացքների հետ: Կօնֆուցիոսի մէջ մարմնացած էր չինաց ժողովրդական բնորոշ չատկանիչների կատարեալ պատկերը, իւր բոլոր առաւելութիւններով և պակասութիւններով: Նա զուտ չինացի էր, «չինացիներից չինացի», ժողովրդական ոգու, նրա հայեացքների ամենակատարեալ արտայայտիչը: Չինացին իւր հայեացքներով նախ և առաջ եղել է և է գործնական, ընդլիստ: Նա իւր մտքերով և զգացմունքներով անմիջապէս ձգտում է դէպի այն ամենը՝ ինչ որ շօշափելի է, տեսանելի է: Իսկ գաղափարականը, իղէալականը և այն ամենը, ինչ որ անցնում է իրականի սահմանից՝ նրա համար, ըստ երևութին, խորթ է: Կեանքի մէջ չինացուն ղեկավարում է միայն չոր ու ցամաք հաշիւը. նա գուրկ է այն ամենից, ինչ որ գաղափարական է: Չինացու նույն իսկ երեակայութիւնը ուրիշ ազգերից

պակաս զարգացում ունի: Միևնույն չոր ու ցամաք, արմատական, առանց որևէ զաղափարականի լատականիչներն ևս տեսնում ենք Կոնֆուցիոսի վարդապետութեան մէջ և նոյն խակ իրան Կոնֆուցիոսի մէջ: Ահա այս է պատճառը, որ Կոնֆուցիոսի հաստատած կանոնադրութիւններն ու հրահանգները դիմացան բոլոր լեզափոխութիւններին, և երկրի մէջ նոր և օգտակար հաստատութիւններ մտցնելու ամեն մի փորձ միշտ զղուանքով մերժւում էր չինացիներին, որովհետեւ «իմաստութեան իշխանը» ամեն ինչ աւանդել է, ամեն ինչ ասել է, ամեն բանի մէջ խորասուզուել է: Սրա համար և նրա վարդապետութիւնը, այսպէս պսած, ժողովրդի մարմնի և արեան մէջ մտաւ առանց որևէ խռովութեան և արիւնհեղութեան, և բոլոր չինացիները առանց կրօնի խարութեան Կոնֆուցիական են:

Կոնֆուցիոսի հետեւողներին մէկը հետեւեալ խօսքերով է բնորոշում իւր ուսուցչին. «Միայն նա է օժտուած իմաստունի բոլոր այն բարեմասնութիւններով, որոնք գոյութիւն ունին երկնքի տակ. — վեհանձն, համեստ, ազնիւ, առաքինի, ամեն բանի մէջ թափանցող խելքով, ամեն ինչ ընդգրկող գիտութեամբ, նեղութեան ժամանակ անմըդով, իրերի ճանաչելում պարզ, հաստատուն և անխախտելի. նա երկինք և երկիր է, որոնք ամեն ինչ սնուցանում և պահպանում են. նա տարուաջ չորս եղանակ է իրանց չափողական փոփոխութեամբ,

նա արեւ և լուսին է. խոր և գործունեալ՝ որպէս կենդանի ջրի աղբիւր, որ բարիք է սփռում իւր շուրջը: Նա նման է անդունդի, և ընդարձակ է որպէս երկինքը: Նա այսպէս է, և բոլոր բնութիւնը ջարդում է նրան, հաւատում է նորան և խոնարհւում նրա առաջ: Նրա անուան փառքը տարածուել է ամբողջ Կենտրոնական թագաւորութեան մէջ և հասել Ման-մա ազգերին: Ամեն տեղ, որտեղ լողում են նաւերը, արշաւում կառքերը, որտեղ թափանցում է մարդկային ուժը, տարածւում է երկնային ծածկոցը, որտեղ փայլում են արեւն ու լուսինը, որտեղ իջնում են ցօղն ու եղեամբ՝ ամենքը, որոնք ապրում և շնչում են՝ փառաբանում, սիրում են նրան:

Միևնույն կերպ են նախում և բոլոր չինացիք իրանց «ամենասուրբ, ամենիմաստուն և ամենաառաքինի» վարժապետի վրայ: Փիլիսոփան թանգարժէր նրանց համար գլխաւորապէս իւր գործնաական բնաւորութեան շնորհիւ: Ինչպէս տեսանք՝ նա չէր սիրում պատմել այն ամենի մասին, ինչ որ բարձր էր իրականից: Նրա խօսակցութեան որ բարձր էր իրականից՝ չին՝ հին պատառարկաները շատ անգամ լինում էին՝ հին պատմութիւնը, ժողովրդական երգերը և հին ծէսերը. նա միայն երբեմն էր աւելի բարձր հարցերի մասին խօսում, միևնույն ժամանակ խոյս տալով այն ամեն բանից՝ ինչ որ վերացական է:

— Կան այնպիսի բաներ, որոնց մասին չիս-

սեղը եւս դերադասում եմ խօսելուց, ասաց նա մի անգամ իւր աշակերտներին, և այս բանը նա իմաստութեան նշան և արժանաւորութիւն էր համարում:

Նա այսպէս է որոշում իմաստունի իսկական տիպը.

— Իսկական իմաստունը առանց հրաւերի չէ երևում խնջոյքներում, միայն փալկելու համար, ալլ սպասում է որ հրաւիրեն: Հրաւիրուելով՝ նա ալլոց նման լարմարում է քաղաքավարական կանոններին և աշխարհի պայմաններին: Նթէ նրանով աչնքան էլ չեն հետաքրքրում՝ նա դրա համար ոչ մի անբաւականութիւն չէ ցոյց տալիս: Առաւօտունից մինչև երեկոյ նա սովորում է: Նրբ որ մի պաշտօն են առաջարկում՝ իմաստունը, եթէ իւր մէջ ընդունակութիւն է գտնում՝ ընդունում է և կատարում ամենաչն ճշտութեամբ: Նա լարգանքներ չէ որոնում, հարստութեան աչք չէ դնում. նրա միակ հարստութիւնը, որին նա փափագում է՝ իմաստութիւնն է, ամենամեծ պատիւը իմաստուն կոչուելն է: Նա մտերմանում է հաւատարիմ մարդկանց հետ, խօսակցում անկեղծների հետ. մեծամեծների առաջ չէ սողում, ամբոխի առաջ չէ գոռողանում, դէպի առաջինները նա լարգանքով է վերաբերում, իսկ դէպի վերջինը սիրով: Նթէ պատահում է որեւէ սխալմունքի համար մէկին լանդիմանել կամ խրատել՝ նա այդ վերին աստիճան

դգուշութեամբ է կատարում և ոչ ոքի ինքնասիրութեան չէ դիպչում: Խելօք մարդկանց նա լարգում է, բայց չէ աշխատում նրանց գովասանքին արժանանալ, ոչ ստորանում է նրանց առաջ, ոչ գոռողանում: Միշտ և ամեն բանի մէջ կատարելով իւր պարտքը՝ նա ոչնչից չէ վախենում. ամեն տեսակ լարձակմունքներից պաշտպանում է միայն իւր ճշմարտութեամբ և արդարութեամբ. օրէնք և արդարութիւն—ահա նրա մշտական զէնքը: Սիրելով բոլոր մարդկանց՝ նա ոչ ոքից վախենալու պատճառ չունի. բարբարոսներն անգամ նրա համար երկիւղալի չեն: Որքան էլ շատ է իմանում՝ նա դարձեալ աշխատում է ընդարձակել իւր գիտութեան պաշարը: Անարատ վարքի տէր լինելով՝ նա աչնու ամենաչնիւ միշտ իւր վրայ հսկում է. աչնիւ և բարի լինելու համար ամենաանշան բանն անգամ կարևոր է: Պաշտօնավարութեան ժամանակ իմաստունը խիստ է, բայց ամենքի հետ միակերպ սիրալիւր և բարեհամբոյր, ուրախ և մատչելի բարեկամների շրջանում: Նորան թէև հաճելի է իմաստունների հետ լինել, բայց ոչ-իմաստուններին եւ չէ արհամարհում: Ընտանիքի մէջ իմաստունը անխտիր սիրում է բոլոր իւրաքանչեւներին: Նթէ մէկը խօսքով կամ գործով իմաստունին վիրաւորում է՝ նա ոչ զայրոյթ է լացնում, ոչ բարկութիւն: Իմաստունը, ինչ դրութեան մէջ էլ որ լինում է՝ միշտ աշխատում է օգտակար լինել իւր

հայրենիքին կամ համաքաղաքացիներին: Որեւէ օգտակար ծառայութիւն անելուց չետոյ նա չէ պարծենում, ալլ համեստութեամբ և համբերութեամբ սպասում է վարձատրութեան, իսկ եթէ չեն վարձատրում՝ նա չէ տրտնջում, չէ դանդաւում: Այնիւ մարդկանց գովասանքը և սեփական գիտակցութիւնը ալլ մասին, որ ինքը լաւութիւն է արել լաւութեան համար — ահա նրա ամենաշքեղ պարգևները: Եթէ նորան չարգանք են ցոյց տալիս՝ չէ հպարտանում, ալլ ըստ առաջնոյն մատչելի է լինում ամենքին և իւրաքանչիւրին: Նախանձ, ամբարտաւանութիւն, ատելութիւն՝ նորան անծանօթ են. նա ամենքի հետ ապրում է համերաշխութեամբ, որ և դէպի նրան է գրաւում է ընդհանուրի համակրանքը: Իսկ իմաստութեան ամենագլխաւոր աղբիւրն է սէր և կարեկցութիւն դէպի բոլոր մարդկութիւնը:

Այսպէս էր և ինքը Կօնֆուցիոս իւր կեանքում: Նրա կեանքի բոլոր նկարագրութիւնները, որոնք մնացել են անմիջական աշակերտներից՝ վկայում են, որ փիլիսոփան արդարասէր էր, գործունեաց, ազնիւ, սառնարիւն և զգուշ: «Լարժապետը, ասում են նրանք, ճշմարտասէր էր, լի արժանապատուութեամբ, բարեհամբույր և քաղաքավար, բաց միեւնոյն ժամանակ իւր սեփական արժանապատուութիւնը գիտակցող և միշտ հանդիստ: Իւր մասնաւոր կեանքում չափաւոր էր և քաղա-

քալարի: Շատ չէր ուտում, ուտելիս չէր խօսում, անկողնում պառկած ժամանակ ևս չէր խօսում, կառքի մէջ նստած ժամանակ իրան ուղիղ էր բռնում... Կօնֆուցիոս կեանքի մէջ գործնական լինելով՝ նոյնն էր և իւր վարդապետութեան մէջ: Նրա բոլոր զրոյցներն ու խրատները կեանքի իմաստութեան չափանիշներն էին կրում և սովորական բնական կեանքի կարիքներից աւելի չէին բարձրանում: Կօնֆուցիոսի ամբողջ վարդապետութիւնը հետեւեալ երեք կանոնաւոր չարաբերութիւնների մէջ է պարունակուում. թաղաւորի չարաբերութիւնը դէպի իւր հպատակները, հայրենիքը՝ դէպի զաւակները և տղամարդկանցը՝ դէպի կանայք: Այդ վարդապետութեան ծուծն են կազմում նոյնպէս հետեւեալ հինգ բարձրագոյն առաքինութիւնները կամ պարտականութիւնները. — մարդասիրութիւն, աշխիւքն կարեկցութիւն դէպի մեզ նմանները առանց խտրութեան. արդարադատութիւն կամ հատուցումն իւրաքանչիւրին ըստ արժանւոյն առանց կեղծաւորութեան. հնազանդութիւն գործադրուող օրէնքների և կատարումն տասիրութիւն, աշխիւքն արտապատել կատարեալ զգուշանք դէպի կեղծն ու ստութիւնը. վերջապէս ճշմարտութիւն և ազնուութիւն միշտ և ամեն բանի մէջ: Կօնֆուցիոս մարդկային ցեղի բախտը գրտնում էր ալս չարաբերութիւնների և առաքինու-

թիւնների մէջ, որոնց չըջափակելով լայտնի արա-
րողութիւններով կամ ծէսերով՝ ստեղծեց իւր վար-
դապետութիւնը բարոյականութեան մասին: Այս
բարոյականութեան հիմնական սկզբունքն է՝ չհրա-
պուրուել ոչ մի բանով, հաւասարակշռութիւն պահ-
պանել գործունէութեան մէջ, ամեն բանի մէջ
բունել միջին ճանապարհը—չափաւորութիւն և հա-
մեստութիւն միշտ և ամեն գործում: Այսպիսի հան-
գիստ գործունէութեան արդիւնքն է անվրդով
կեանք—ահա այն բարոյական կատարելութիւնը,
որին պիտի ձգտի իւրաքանչիւր իմաստուն: Մարդս
ամեն բանի մէջ պէտք է միջին ճանապարհը բըռ-
նէ, չպէտք է լինի ոչ չափազանց չար, ոչ էլ չա-
փազանց բարի, ոչ չափազանց պիտի տխրի, ոչ էլ
չափազանց ուրախանայ: միով բանիւ հրապուրն ու
ծալրալեզութիւնը նրանից շատ հեռու պիտի լինին.
ահա հէնց սրա մէջ է կայանում անձնական բա-
րոյականութեան հիմնական կանոնը: Միևնոյնը
պէտք է պահպանել նաև այլ անձանց հետ ունե-
ցած բարոյական չարաբերութիւնների մէջ, այս-
ինքն ուրիշին չպէտք է անել այն բանը, ինչ որ
մարդ չէ ուզում, որ իրան անեն, այսպիսով այս-
տեղ ևս ներդաշնակութիւն պահպանելով: Մնա-
ցեալ բոլոր բարոյական առաքելութիւններն ևս
ենթարկւում են միևնոյն սկզբունքին: Ճշմարտա-
սիրութիւն, ազնուութիւն, հաւատարմութիւն դէպի
իւր անձը և խօսքը, անկեղծութիւն, որ ծառայ-

ում է իբրև հիմք հասարակական կեանքի խաղաղ
և բարի չարաբերութիւնների, հնազանդութիւն և
չարգանք դէպի ծերերը, խոնարհութիւն, համբե-
րութիւն և վերջապէս քաղաքավարութիւն դէպի
ամենքը առանց բացառութեան՝ սրանք բոլորն էլ
անմիջապէս կապ ունին միջին ճանապարհը բըռ-
նելու կամ համերաշխութեան սկզբունքի հետ: Այս
տեսակէտից, ի հարկէ, մասամբ սանձահարում են
նաև զգայական, հեշտական զուարճութիւնները:

Միջին ճանապարհը բռնելու վարդապետու-
թիւնը ծառայում է իբրև մի խթան, որ պալմա-
նաւորում և ընդգրկում է ժողովրդի ամբողջ ար-
տաքին կեցութիւնը, նրա ապրելու եղանակը,
ամբողջ պետական կազմը և նրա հոգեկան ու բա-
րոյական դրութիւնը: Կօնֆուցիոս այս վարդապե-
տութիւնը ժողովրդի մտքի մէջ արմատացնելու
նպատակով ստեղծեց մի շարք արարողութիւններ
կամ ծէսեր: Ծէսերը ծառայում են իբրև սանձա-
կամ ծէսեր: Ծէսերը սկզբունք. նրանց շնորհիւ մարդս
հարող, զսպող սկզբունք. նրանց շնորհիւ մարդս
խմանում է, թէ որոշ հանգամանքներում և որոշ
ժամանակ ինչպէս պէտք է վարուի, որ պահպանէ
ընդունուած քաղաքավարութիւնը և իւր արժա-
նապատուութիւնը, խոյս տալով զանազան տեսակ
ընդհարումներից, կռիւներից և հալոյանքներից:
Կօնֆուցիոս ասում էր, որ ծէսերը ցոյց են տալիս
երկրի երկնքի հետ ունեցած կապը, մարդկանց
մէջ կարգ են հաստատում, որ նրանք արտաքին

արհեստական զարդարանքներ չեն, այլ բնածին են մարդու: Նա քարոզում էր, որ ծէսերը հիմնուած են իրերի ստորին և բարձրագոյն արժանեաց որոշման վրայ, բնութեան մէջ ամեն տեղ նկատուող զանազանակերպութեան վրայ, և հէնց զրա համար էլ հաստատուած են զանազան կանոնադրութիւններ, որոնք վերաբերում են հագուստին, ամուսնութեան, թաղման, զոհաբերութեան, պալատական ընդունելութեան: Ծէսերով որոշուած են թագաւորի և երկնքի, թագաւորի և իւր աստիճանաւորների, հօր և զաւակների, մեծերի և փոքրերի, մարդու և կնոջ և վերջապէս բարեկամների միմեանց հետ ունեցած չարաբերութիւնները:

Արդարեւ, չինաց ժողովրդական ամբողջ կացութիւնը չըջափակուած է ծէսերով, մինչև անգամ ինքնակրթութեան միջոցները, ընտանեկան և տնտեսական կացութիւնը, պետութեան կառավարութիւնը և այլն առանց ծէսերի տեղի ունենալ չեն կարող: Միով բանիւ Կօնֆուցիոսի ամբողջ բարոյական չափութիւնները—սէր, ճշմարտութիւն, իմաստութիւն, գիտութիւն, ազնուութիւն՝ բոլորը ծէսերով են կատարուած, ամեն ինչ նախատեսուած է ծէսերի մէջ, առէն ինչ պայմանաւորուած է նրանցով: Ուստի և ծիսակատարութիւնը կրօնի տեղը բռնելով՝ բոլորովին ճնշել է աչն զուտ իսկական բարոյականութիւնը, որ հիմնուած է մարդու բարի գործելու անհրաժեշտութեան ազատ

համոզմունքի վրայ: Սէր, բարեգործութիւն, զոհաբերութիւն և այլն բոլորն ևս ի նկատի են առնուած գործնական տեսակէտից. մարդս պէտք է սիրէ իւր մերձաւորին, բարի գործէ, զոհ մատուցանէ, որովհետեւ այստեղ նա իւր սեփական շահն ունի. միևնոյնը ևս նորան կարող են անել:

Կօնֆուցիոսի նպատակն էր մարդկանց տանել դէպի իսկական բախտաւորութիւնը, որը նա գտնում էր իւր ստեղծած բարոյագիտութեան մէջ: Այս բարոյագիտութիւնը գլխաւորապէս պահանջում էր, որ զաւակները անսահման հնազանդ լինում էր, որ զաւակները անսահման հնազանդ լինէին ծնողաց, կանայք՝ արանց, հպատակները՝ պետութեան. պահանջում էր, որ մարդիկ իրանց բոլոր զգացմունքներով չափաւոր լինին և միջին ճանապարհը բռնեն:

«Քաղցրաձայն մշահաւը, ասում է Կօնֆուցիոս, ժաշի ծալին իւր համար ապաստան է գտնում և իմանում է, թէ որտեղ պիտի կենայ: Ինչի մարդն ևս թռչունին չէ հասնում, աշխնքն ինչի մարդն ևս իւր գործունէութեան մէջ միջին ճանապարհը չէ բռնում»:

Միջին ճանապարհը բռնելու այս վարդապետութեան վրայ է հիմնուած Չինաստանի ընտանեկան և պետական կեանքի ամբողջ կազմը: Կողմնակից լինելով ռամկավարական սկզբունքների և թագաւորի անսահման իշխանութեան՝ Կօնֆուցիոս աչնու ամենապիւ սահմանափակում էր այս

իշխանութիւնը իւր չափաւորութեան վարդապետութիւնով. նրա կարծիքով՝ «թաղաւորին կարելի է ընդդիմանալ միայն նրա ծալրալեզ պահանջներին ժամանակ. քչով բաւականացողին հեշտ է հնազանդուել»։ Այսպիսով նա վեհապետներին ևս հրաւիրում է չափաւորութեան։

Այսպէս ուրեմն Կօնֆուցիոս իւր վարդապետութեամբ չայտնւում է ոչ իբրեւ կրօնական վերանորոգիչ, այլ իբրեւ վերականգնող և վերակազմող չինաց նախկին բարոյականութեան։ Նա առհասարակ կրօնի մասին քիչ էր խօսում։ Կրօնը նա զարգացած դրութեան մէջ էր գտել և կարեւոր չէր համարում կամ ուղղակի խոյս էր տալիս նրա մասին խօսելուց, չցանկանալով մտածել այն բանի մասին, ինչ որ բարձր էր գործնականից, իրականից։ Բայց և այնպէս նա եռանդով պաշտպանում էր բոլոր հին կրօնական ծէսերը, թէև նրանց նշանակութեան մասին տրուած հարցերին պատասխանում էր կամ խոյս տալով կամ բոլորովին մոլթ կերպով։ Օրինակ, նա աշխատում էր ժողովրդի մէջ պահպանել ոգիներին չարգելու սովորութիւնը։ Նրա կարծիքով՝ ոգիները առանձին ոգիների և բնական երևույթների ներկայացուցիչներ են, որոնք խիստ բազմաթիւ լինելով՝ աներևութապէս զրտնւում են իւրաքանչիւր արարածի մէջ և հոսող ջրի պէս անցնում են գլխների վրայով աջ և ձախ կողմերից։ Նախնեաց երկրպագելու սովորութիւնն ևս

ընդունում էր Կօնֆուցիոս, ինչպէս այդ երևում է մօր թաղման ժամանակ արտասանած խօսքերից։ Առհասարակ բնութեան ոգիներին և հանդուցեալների հոգիներին երկրպագելը Կօնֆուցիոս բարոյական տեսակէտից օգտաւետ էր համարում ամբօրին համար։ Օրինակ, երբ իւր աշակերտներից մէկը ոգիներին ոչխար զոհելու մասին կասկածանքով հարցրեց՝ Կօնֆուցիոս պատասխանեց.

— Դուք ոչխարն էք մեղքանում, իսկ ես կը ցանկանալի ծէսը պահպանել։

Իսկ այն հարցին, թէ ինչ է նշանակում, նախնեաց լիշատակին զոհաբերելիս, միևնույն ժամանակ զոհաբերել նաև երկնքին՝ նա պատասխանեց. «Երկնքը համաշխարհային սկզբունք է, գոյութեան կեցուցիչ աղբիւրն է։ Նախնիք ևս մեր և ապագայ սերնդի գոյութեան աղբիւրն են։ Մարդու առաջին պարտքն է զոհանալ երկնքից, երկրորդ պարտքն է երախտագէտ լինել նախահայրերին։ Երկրպագելով երկնքին՝ մենք միևնույն ժամանակ երկրպագում ենք նախահայրերին»։

Անմահութեան վերաբերեալ հարցերում Կօնֆուցիոս ուղղակի լռում էր։ Մի անգամ աշակերտներից մէկը հարցրեց. «Այլաժապետ, ես կցանկանայի հարցնել մահուան և նրանից չետոյ լինելիք դրութեան մասին»։ Կօնֆուցիոս նորան պատասխանեց. «Նիկէ դուք չէք իմանում կեանքը, ինչպէս կարող էք իմանալ մահը»։ Մինչև անգամ մահուան

անկողնում նա մտատանջում էր միայն մարդկային փառքի անհաստատութեան մասին, կեանքի կարճութեան մասին. բայց ապագայի անչալոսութեան մասին, կամ այն մասին, թէ ինքը ուր է դնում՝ մի խօսք անդամ չստաց, որ երկիւղ կամ չուղմունք արտայայտէր: Այստեղ Կօնֆուցիոս ներկայանում է իբրեւ զուտ չինացի. — այս ժողովրդի բնաւորութեան աչքի ընկնող գծերից մինն էլ նրա դէպի կեանքն ունեցած զարմանալի անտարբերութիւնն է: Այն հարցին, թէ հանգուցեալները միւս աշխարհում ինչ դրութեան մէջ են լինում և թէ ինչպէս պէտք է ծառայել նրանց հոգիներին՝ Կօնֆուցիոս դարձեալ չեղուելով պատասխանեց. «Եթէ լաւ չենք կարող ծառայել կենդանի մարդկանց, ինչպէս պիտի ծառայենք հանգուցեալներին»: Այնու առթիւ, ինչպէս չափնի է՝ նա ինքը խիստ պահպանում էր բոլոր ծէսերը, որպէսզի իւր օրինակով ալլոց ևս ստիպէ նոյնն անել: Սրանով Կօնֆուցիոս ուզում էր չարգանք զարթեցնել դէպի նախնեաց լիշատակը, ուրեմն և դէպի նրանցից կոտակած կենսական սկզբունքները: Նոյն նպատակով՝ նա պահանջում էր, որ նախնեաց պատուին աջնպէս՝ ինչպէս կենդանի մարդկանց, թէև միևնոյն ժամանակ չէր հաւատում նրանց իսկական գոյութեան: Երբ նրան հարցրին, թէ ինչ է նշանակում հանգուցեալներին կերակուր մատուցանել, միթէ նրանք կարող են ուտել, Կօնֆուցիոս պա-

տասխանեց. «Երբէք՝ այդ կատարւում է միայն նրա համար, որ մենք սովորենք չարղել հանգուցեալներին՝ որպէս կենդանի մարդկանց»: Միևնոյն զուտ գործնական միտքն է պարունակում Կօնֆուցիոսի պատասխանը այն հարցին, թէ նախահայրերը արդեօք խմանում են այն ամենը, ինչ որ անում են նրանց սերունդները, նրանց տեսնում, լսում են արդեօք: «Այդ մասին դժուար է որոշ բան ասել, պատասխանեց Կօնֆուցիոս. եթէ ասեմ, որ նախնիք զգում են սերնդից իրանց ցոյց արուած չարգանքը, որ նրանք խմանում են այն ամենը, ինչ որ կատարւում է երկրի վրայ՝ այն ժամանակ կենդանի մարդկանց մանկական սիրով լի սրտերը բացառապէս հանգուցեալներին կնուիրուին և անուշադիր կլինին դէպի իրանց սեփական կեանքը. ընդհակառակը, եթէ ասեմ, թէ հանգուցեալները ոչինչ չեն խմանում իրանց սերունդների մասին՝ այն ժամանակ կթուլանայ նրանց լիշատակը չարղելու եմանակ, և հանգուցեալներին կենդանի մարդկանց հետ կապող սրբազան կապը կկորցնէ իւր արմէքը: Շարունակեցէ՛ք առանց մտածելու չարղել նախահայրերին և երեակայեցէ՛ք, որ նրանք վկայ են մեր բոլոր գործերին: Ամենալաւն այս է»:

Մի խօսքով՝ Կօնֆուցիոս ընդունում էր զանազան տեսակ կրօնական ծէսեր, որոնք նրա կարծիքով ծառայում էին իբրեւ միջոց պետութեան հանգստութեան և ժողովրդի բարօրութեան: Սրա-

նից աւելի չբարձրացաւ նա, իբրեւ զուտ չինացի, որ չէ ընդունում ոչ մի չափանութիւն, չէ հաւատում ոչ մի հրաշքի. նա ծէսերի վրայ գործնական տեսակէտից էր նայում: Կօնֆուցիոս ներկայանում է իբրեւ գործնական, միայն շահը ի նկատի ունեցող բարոյախօս փիլիսոփայ: Նրա վարդապետութիւնը բոլորովին համապատասխանում էր չինաց ժողովրդի բնաւորութեան և հայեացքներին, և հէնց այս իրողութիւնը առաւ նորան այն ոլժը, այն ազդեցութիւնը, որ մինչև այժմ էլ պահպանւում է Չինաստանում:



Ընկերութեան հրատարակութիւնները վաճառուի են Ընկերութեան գրասենեակում եւ գրավաճառանոցներում:

1897 ԹՈՒԻՆ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	Բ. Կ.
115 Անվան դերձակը	— 40
116 Մոխրատնակի	— 40
117 Քնած դեղեցկուհի	— 40
118 Կարմիր գլխարկ	Շ. քեղ — 40
119 Գուլիվէրը Թզուկներէ աշխարհում	— 40
120 Նապաստակի և ոգնու զրազը	պատկեր — 40
121 Գուլիվէրը հսկաների աշխարհում	— 40
122 Լուսերեւելի (մամ. տակ է)	Ներով — 40
123 Ճշմարտ. միշտ յաղթ. է	— 40
124 Օրերօնի հրաշալի եղջիր	— 40
125 Դաւիթ Կոպպերֆելտ. Չարլս Գիլիստի, Թ. Պ. Պ. 1	— 50
126 Դաւիթ Կոպպերֆելտ, Աննենսկայա, Թ. Կ. Գիլիստի	— 50
127 Խժուղներ, պրօֆ. Մ. Բոդա. Թ. Լ. Մ. Ադամ.	— 40
128 Ընտիր պատմութեան, Ալ. Փ. Գոդէր, Լ. Վ. Փափ	— 40
129 Հոս Կիւնը, Ա. Ահարոնեանի	— 40
130 Կեանքի տեսարաններ, Քառիմ (մամ. տակ է)	— 50
131 Ոսկի շինողներ, Յշուկէ, Թ. Խ. Մարտիրոսեանի	— 50
132 Գուլիվէրի ճանապարհ, Թ. Լ. Ադամ	— 5
133 Թուրքերի աշխարհային տեղափոխութիւնը	— 40
134 Վեներական վաճառականը, Թ. անգլ. Յ. Ս. Մամ.	— 15
135 Երկրաշարժ և հրաբխ. լեռն., Լուսկեվիչի	— 20
136 Վէպիկներ և զրոյցներ, Գի. քը Մոպս. Թ. Հ. Ամ. 1	— 10
137 Բուդապէս, կազմ. Ստ. Մ.	— 20
138 Երկրի և երկնքի մասին, Վ. Լուսկեվիչի	— 10
139 Կօնֆուցիոս, կազմ. Գ. Բոդա.	— 20

ՇԵՐՔ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

- 1) Բուզգճա, կազմ. Ստ. Մ. . . 20 կոպ.
- 2) Կօնֆուցիոս, կազմ. Գ. Բաղը. . 20 »

923

2013

0025162

ՀՀ Ազգային գրադարան



NL0025162

